

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1—2

ՅՈՒՆՈՒԱՐ — ՓԵՏՐՈՒԱՐ

ԿԵ. ՏԱՐԻ 1951

ԵԶՐԵԼ ՎԱՐԳՈՊԵՏ ԿՈՂՐԱՅԻ ԿԵԱՆՔՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒ- ՆԵՌԻԹԻՒՆԸ

(Շարունակութիւն եւ վերջ):

3. Մեկնութիւն Արարածոց:

Կիրակոս Արեւելցի իր Յայտմաւորքին մէջ կը գրէ թէ Եղիշէ աշխատասիրած է «ՎՄեկնութիւն Արարածոցն»: Այս գործը ձեռագրական Հաւաքածոյքներու մէջ տակաւին չէ յայտնուած: Բայց Վարդան Արեւելցի ունեցած է անկէ օրինակ մը, ուսկից օգտուած է Ծննդոց գրոց իր Մեկնութեան մէջ, զոր կ'անուանէ «Հաւաքումն Մեկնութեան սրբոց արանց Եղիշէի, Եփրեմի, Յովհաննու Ոսկերերանին եւ զորս տեսանէք ի յանցներսն», յոտաջ բերելով բազմաթիւ կոչումներ ԵՂ, կամ ԵՂՇի համառոտագրութեամբ ի բուսանցս: Ան կը յիշէ այս գործը նաեւ իր Ժղկանքին մէջ, զոր յօրինած է Հեթում Ա.ի համար. անգամ մը մեկնելով «Յերկրորդ աւուրն արար գհաստատութիւնն» կը գրէ. «Շատ ինչ ասէն զնմանէ (Մեկնիչը). այլ զրեմ ձեզ զԵղիշէին, զոր սիրեմ, մանաւանդ եւ հաճոյ է ինձ. Զքնութիւնն աւղոյն խաացոյց եւ կարծրացոյց, թանձր գործեաց. ոչ որպէս երկաթ կամ քար, այլ սեղմեաց եւ անփոփոխ գործեաց եւ կազմեաց երկին. եւ զըրոյն կէսն, զոր երկիր ի վերայ իւր ունէր, զողեաց տարաւ էհան ի վեր» (Հայկէպ, Թ. 155, էջ 15. յամէ 1292. Յուցակ Արտաւազ Արքեպիսկոպոսի, էջ 343): Հետաքրքրական է նաեւ յաջորդ տեղիքս. «Մերն Եղիշէ ասէ, թէ Տեսի այր մի քաղզէացի, որ ասաց թէ Գաի ես տախտակ մի կապարեաց ի փրած աշտարակին, եւ կայր ի նմա զիր քաղզէացի, թէ ո՞ր իշխան քանի՞ աղիւս պարտի. եւ ո՞ր լցեալ է գասկս տարազու» (անդ, էջ 82). խօսքը աշտարակաշինութեան վրայ է: Վարդան ունի ուրիշ երեք տեղիքներ ալ. «Բայց յոտաջին լինել երկնիցն եղեն ընդ հրեղինին, որպէս ասէ մերն Եղիշէ, թէ որ-

պէս կենդանածնեցաւ երկին, կենդանածնեցաւ երկիր...» (էջ 6):
 «Եւ զայս այլ նա (ասէ). Հրեղէն երկինն շրջապայէ, ոչ յոք մերձ. բաժանեալ յերկուս կրտսպուենդս...» (անդ, էջ 7):
 «Եւ ասէ Եղիշէ, թէ ի վեր քան գեթն մորրակազ է ասոյ այլ կան նշանաւորք...» (անդ, էջ 28):
 Եղիշէի այս Մեկնութենէն կոչումներ կան նաեւ էջմիածնի Թ. 2679 ձեռագրին մէջ (Թղ. 211, Ծննդոց եւ Ելից խմբագիր մեկնութիւն մը). «Եղիշէ. Անիծանելն զՔանան... (Ծնն. Թ. 25. հմմտ. Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ հայ. ձեռագրաց Վենետիկի Մխիթ. Մատենադարանի, Բ., էջ 298. Երեւակ, Դ., 1858, էջ 268: Նո՞յն տեղիքը Վարդանի Ծննդոց Մեկնութեան մէջ, Թ. 229, Թղ. 44բ):
 Նոր հայկազեան լեզուի Բառգրքի հեղինակը, Նախագուտն, էջ 11, ակնարկելով գրուածքս կը գրեն. «Կան եւ հատուածք Մեկնութեան Արարածոց, այսինքն գրոցն Ծննդոց, ի գիրս այլոց մատենագրաց. անձկալի է զամբողջ գործն տեսանել»:
 Թերեւս այս Մեկնութիւնը կ'ակնարկէ Եղիշէ, երբ կը գրէ Դատաւորաց Մեկնութեան մէջ. «Թիւ Եօթներեկին, որպէս ասացեալ է մեր յայլում վայրի, վասն զի մի է գորութիւնն աստուածային գրոց, վեց ի նոցանէ զվեցօրեայ արարածքս նշանակէ, որ ի սկզբանէ. իսկ Եօթներօրդն՝ սուրբ փափուկ նուիրեալ Աստուծոյ օր, որ եւ անաշխատելի գորութեան հանդիստ անուանեցաւ» (էջ 190):
 Կը համարիմ թէ ինչպէս Յետուայ եւ Դատաւորաց գրքերու, նոյնպէս Ծննդոց գրքի կարեւոր տեղերու «ճայրաքաղ» Մեկնութիւնը միայն տուած է:
 Եղիշէ կ'երեւայ թէ նաեւ Ելից գրոց ծայրաքաղ մեկնութիւնը գրած է: Վարդան Արեւելցի իր Հնգամատենին Մեկնութեան մէջ Ելից ԻԱ. 24—27 համարներու համար յոտաջ բերած է Եղիշէի անուանով տեղիքս. «Ակն ընդ տկան: Եւ թէ միականի ոք

հանձն զակն զայլոյ, մի հանցի եւ նորայն, եւ կամ ոք զմիակնոյ եւ զամենայն լոյսն բառնայր, զի՞նչ պարտ էր անել. զամենայն անուր եւ զնորա լոյսն: Այլ որպէս ասացան, շարասրտաց է օրէնքս. իսկ կատարելոցն ոչ երկնչել յայնցանէ, որ սպանանեն զմարմին եւ հարկանողին դարձուցանել եւ զմիւսն: Իսկ ծառայի կամ աղախնոյ ակն կամ ատամն հանեալ ի տեսնէ իւրմէ, ազատեսցին ընդ այնր. զի տէրն ի տեսանէն զփնասեալն ծառայ, հարկանի ի խղճէ մտացն. եւ ծառայն կամ աղախինն բազմապատիկ խոցոտին եւ անիծանեն. իսկ ք յազատելն՝ երկոքին մեղմացեալ հանգչին» (Վիեննա, Թ. 229, թղ. 107բ):

4. Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորացն. զոր արարեալ է ծայրաքաղ տեսան Եղիշէի Հայոց վարդապետի:

«Կոչեցաւ Յեսու Նաւեանց ի Տեառնէ առաջնորդ Իսրայելի: Ընտրեաց երկու յերիտասարդացն Իսրայելի եւ առաքեաց աս ի լրտեսել զերկիրն եւ զերկրով...»

(Մեկնութիւն Դատաւորաց:) Առ ի՞նչ անուանեցաւ Մասեփատ լալտոյ: Ապա եկն եհաս հրեշտակն Տեառն ի Գաղգաղա ի լալտաղ անդր...»

ՎՋ. Եւ այսպէս փառք Աստուծոյ ծագեցաւ աս նոսա. որով փառաւորեալ պարծին ի Տէր. զի նմա վայել է փառք ի յիսանութիւն...»

— էջմ. 1097, 153բ—187բ (1280. ցէջն 197, տ. 21 տպագրին) ¹: 1135, 238բ—251ա (1288): 1267, 210բ (ԺԴ): Երուսաղէմ 347, 132բ—152ա (ԺԲ/ԺԳ): 882 (ԺԷ): 999, 290բ (ԺԸ): Վենետիկ 352, էջ 592—624 (ԺԲ. Mariès, Hippolite, 21):

Վարդան Բաղիշեցի Ամիրտուրու վանքի գրադարանին մէջ երեք օրինակ կը յիշէ այս Մեկնութենէս, ԽԲ համարին տակ. «Երկու գիրք Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորացն եւ Սամուէլի եւ Դ թագաւորութեանց յեփրեմէ եւ յեղիշէ, որիչ որիչ մեկնեալ. եւ ընդ միոյն Դանիէլի մեկնիչն ¹. եւ ընդ միոյն Եւագրեայ բնարան եւ հարիւրօրեաքն: Այլ եւ ընդ Կոչումն Ընծայութեան գրոցն եւս զոյ Մեկնութիւն Դատաւորացն եւ Յեսուայ, որ լինի երեք». Արարատ, 1903, էջ 181:

¹ Հասանօրէն նոյն Վենետիկի Ա. օրինակին հետ, որ բոլորգիր է եւ ունի կից Դանիէլի Մեկնութիւնը: Նոյն Մատենադարանի Բ. օրինակը գաղափարաւոր է էջմիածնի 1280ին գրուած օրինակէն:

Նոյնը կայ նաեւ Վարդան Արեւելցոյ Հնդամատենին Մեկնութեան ինչ ինչ օրինակներու մէջ. «Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց, զոր արարեալ է Տեառն Եղիշէի Հայոց վարդապետի ծայրաքաղ»: Ի կատարածին՝ «Կատարեցաւ Մեկնութիւնս Դատաւորաց, որ յերջանիկ վարդապետէն մերմէ սրբոյն Եղիշէէ արարեալ ծաղկաքաղ, իրբեւ երկրորդ մտօք եւ տեսութեամբ զկնի յԱռաջնոյն Մեկնութիւն որ ի կարգին», այն է Եփրեմի: — Վիեննա, 229, 179ա—190ա (Յուց. 594):

Յեսուայ Մեկնութենէն մաս մը (տպ. 167—169) յառաջ բերած է Գրիգոր որդի Արասայ իր Պատճառաց գրքին մէջ «Եղիշէի Հայոց վարդապետի» խորագրի տակ. Վիեննա, 47, 16բ—17բ (Յուց. 214—215):

Հրտ. Մատենագրութիւնք Եղիշէի Ա. 179—210: Բ. 167—198 (Մեկն. Դատ. 178—198):

Ձեռագիրներու մէջ առ հասարակ Եփրեմի Մեկնութեանց կից կը գտնուի: Եւ արդէն Եղիշէ հետեւող է հոս Եփրեմի. եւ նկատի առած է առաւելապէս այն տեղիքները, զորոնք զանց ըրած էր Եփրեմ. ուստի իրբեւ ի լրումն Եփրեմի Մեկնութեան գրուած: Այս պատճառաւ ալ, ինչպէս միտ դրած են ՆՃԲի հեղինակները Եղիշէի այս «Մեկնութիւնն Յեսուայ եւ Դատաւորաց՝ ուրեք ուրեք ըստ բառիցն անգամ ձայնակից ընդ Եփրեմայ» են: Հ. Յ. Տաշեան նկատելով որ գործս «ծայրաքաղ» յորջորջուած է, կը համարի թէ Վարդան Արեւելցի «ընդարձակագոյն Մեկնութիւն մ'ունենալու էր առջեւն Եղիշէի անուամբ» (Յուց. 594). ինչ որ կարծել թոյլ չի տար տեղիքս, քանի որ Եղիշէ ինքը «ծայրաքաղ» անուանած է իր գործը:

Յեսուայ Գրքէն 10 տեղիք մեկնուած են (Ա—ԺԱ, էջ 167—178) եւ Դատաւորաց գրքէն հինգ (ԺԲ—ԺԶ, էջ 178—198), վերջին գլուխն է «Առ Սամփսոն», 187—198, որ էջ 194, տ. 30—197, տ. 8 ուրիշ գրէ յաւելուած մ'ընդունած է. ներմուծութիւնը կը մատնեն լեզուն եւ ոճը, որոնք Եղիշէինը չեն: Եղիշէ իր մեկնութեանց մէջ մէտ է խորհրդական-սլաբարանական ոճի:

Հ. Գ. Զարբ., Պատմ. հայկ. դպրութեան, էջ 347 կը գրէ. «Թէ այս (Մեկնութիւնք Յեսուայ եւ Դատաւորաց) եւ թէ ասկէ ետքը յիշատակելիք քանի մը ճառերնիս՝ ժա-



մանակաւ երիցազոյն կ'երեւան քան զգրութիւն Պատմութեան եւ ճառին Միանձանց: Ոճոյ մեծ զանազանութիւն մը կը տեսնուի անոնց մէջ»: Դժուար է, սակայն, Եղիշէի գրութիւններու միայն ոճէն անոնց ժամանակագրութիւնը ճշգրել:

Հ. Ն. Անդրիկեան, Բազմավէպ, 1905, 488. ուշադիր եղած է որ տեղիքս «գի մի... ի քաջութիւն առաքինութեանն վատութիւն (տպ. վատահոլութիւն) խառնեցի» (էջ 185) ունի իր համեմատութիւնն Եղիշէի Պատմութեան տեղեցոյս հետ. «Ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան» (17) եւ «յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեցուք» (78): Ուշադրութեան կը յանձնեմ նաեւ տեղիքս. «Ըստ հինգ թագաւորացն հինգ ոտք են օձին. ի սողելի իւրում հինգ պատ առնու կրկնելովն» (176) — որ կը կրկնուի Եղիշէի Վարդապետութեան մէջ. «Հինգ պատ առնու օձ ի սողել իւրում» (էջ 280):

Իսկ արտայայտութեան եղանակը տեղ տեղ հոնտորակաւ թոնջքով է. հմմտ. Միք. Փորթուզալ, Եղիշէ, էջ 64—66:

Հ. Գ. Զարբանեւեան, Պատմ. հայկ. հին դպրութեան, էջ ԻԷ, կը յիշէ նաեւ Թագաւորաց գրոց Մեկնութիւնը, այսպէս սկսող հատուածով մը. «Արդ իրբեւ ետես»: Ուսկի՞ց անուած է տեղիքս. ինձ անձանթ է:

5. Մեկնութիւն տէրուակաւ Աղօթից: «Եղիշէի ուղղափառ վարդապետի [եւ անյաղթ փիլիսոփայի] ասացեալ յԱղօթսն որ ասէ. Հայր մեր որ յերկինս:

է պարզ բնութեամբ եւ առաւել ունի զբարձրութիւն բանից: Ի վեր հայեցոյց եւ զԱստուած՝ Հայր ուսոյց ամենեցուն...»

Վ. Զի Տէր մեր վասն ամենեցուն փրկութեան (այլը՝ թողութեան) եկն. եւ նորա մարդասիրութեանն վայելին փառք...»

— Պարխ, Ազգ. Մատ. 120, 47ա—49բ (ԺԴ. ցէջ տպագրին 205, տ. 16 յապաշխ.) Վենետիկ, 202, 187բ—190ա (1637. Յուց. Բ., 83): 302, 74ա (1840. Յուց. 1125): էջմ. 1812, էջ 580—587 (1780): 1880, 523—529ա (1786): Վիեննա, 731, 125ա—130ա (1787): Թարիկ, Թ. 51, 133բ (1738. Աճառեան, Յուց., 116): Զմմառ, Անտոնեանց, 19, 109բ—113ա (1693): Բէյրութ, Պատրիարքարան, 1, էջ 380: Երուսաղէմ, 929 (ԺԷ):

Հրտ. Մատենագրութիւնք, Ա. 220—227: Բ. 199—206: Մեկնութիւն Տէրուակաւ «Հայր մեր» աղօթից եւ ճառք խաչելութեան... Ս. Եղիշէի վարդապետի, հանեալ ի հնագոյն ճառերնորաց մերոց: Երուսաղէմ, 1836, 8^o, էջք 82:

Գերմաներէնի թարգմանուած՝ Elische, Erklärung des Vaterunsers. Aus dem Armenischen übersetzt und mit Einleitung versehen von Dr. S. Weber, ի գիրս Ausgewählte Schriften der armenischen Kirchenväter. II (München 1927) 273—285. (Bibliothek der Kirchenväter, 58).

Նոյնը նաեւ այսպիսի վերնագրի տակ եւ սկզբնաւորութեամբ.

Մեկնութիւն տէրուակաւ աղօթիցն մեկնեալ յԵղիշէ վարդապետէ Հայոց:

Հայր մեր որ յերկինս: Զաստուածային աղօթս ի Փրկչէն մերմէ աւանդեալ...»

— Զմմառ, Անտոնեանց, 88, 39ա—48ա (ԺԸ):

Վահրամ վարդապետ տէրուակաւ Աղօթից իր խմբագիր Մեկնութեան մէջ հիւսած է հատուածներ նաեւ այս գրութեանէն:

ՆՃԲ կը գնահատէ գրուածքս «գեղեցիկ եւ վայելուչ բանիւ»:

Մեկնութիւնս յիստորիական եւ այս նպատակով ալ ընտրողական է: Ան չի ձգտիր մեկնողական ճշտութեան: Հարկ է ի գովութիւն ըսել, թէ չեն պակտիր հոն վսեմ, նրբագրած եւ զարմանալի մտքեր, ինչպէս նաեւ խորապէս ազդող անդրադարձութիւններ: Ամբողջի մէջ կը փայլի առողջամիտ ոգի եւ խոր հաւատք (հմմտ. Weber, անդ, էջ 275):

Իր արտայայտութիւնը «Յառաջինն հայեցարուք եւ քաջալիրեցարուք. ոչ զչարչարանն միայն բաւական համարեցան անձանց ի հաւատս, այլ եւ զմեռանին քան զպարիւն. ի նահատակադիրն հայեցան եւ կատարեցան» (202) կը յիշեցնէ առաջին եւ յատկապէս երկրորդ Վարդանանց պատերազմները: «Արիամարիեալ է առաջի նորա արծաթ, եւ ոսկի ատեցեալ է յաչս նորա» (էջ 204). ունի համապատասխան տեղիքը Պատմութեան մէջ. «Ընկեցեալ կայր տյնուհետեւ ոսկի եւ ոչ ոք առնոյր իւր առանձինն, արծաթ եւ արիամարիեալ առանց ազահութեան, անարգեալ պատուական հանդերձք...» (էջ 51): Բառն. նահատակադիր

կենթադրէ փխրնի գրուածներու ընթեր-
ցումը: Իսկ վերաբերիմ (204) յաճախ երե-
ւան կու գայ Եղիշէի գրուածքներու մէջ:
Ուրիշ կողմէ զգուշացած է հոս Եղիշէ կի-
րարկել հելլենարան դպրոցի բառեր, ըլլալով
խտու հետեւող հին դպրոցի:

6. Վարդապետութիւն սրբոյն Եղիշէի
ընտիր վարդապետի ըստ Յովհաննու սիրել-
ւոյ ի Չարչարան Տեառն Յիսուսի ֆրիս-
տոսի:

«Յոյժ առաւել զարմանում ընդ ժպրհու-
թիւնս մեր, թէ յո՞ր բարձրութիւնս ձկտե-
ցաւ հասանել. ոչ զի եհաս՝ զարմացայ, այլ
զի կամեցաւ հասանել եւ ոչ եհաս. որպէս եւ
կարծէ իսկ ամբաստանութիւնս մեր... ա-
զաչեսցուք զՏէրն... լինել մեզ արժանի ըստ
նորա փառացն պատմող սուրբ չարչարա-
նացն եւ լուսաւոր յարութեան նորա...»:

Նախարանէ մը (տպ. էջ 240—242) ետքը
կը բաժնուի գրութիւնս էջմիածնի Թ. 975
ձեռագրին մէջ Ա.—Թ մասերու, այսպէս.

Ա. Ամիսս այս լիցի ձեզ, ասէ, սկիզբն
ամսոց եւ յամիսս տարւոյ: Արդարեւ նոր եւ
չքնաղ զօրութիւն Հոգւոյն սրբոյ օրէնսդրէ ի
ձեռն սուրբ Մովսիսի... (էջ 242—246):

Բ. Արդ նոյն Տէր, որ զայս վկայութիւն
եւ զահարկութիւն ի ժողովրդեանն կատա-
րեաց, ի սմին արեզ ամսեան աւետարանե-
ցաւ ի հրեշտակէն սրբոյ Կուսին ի Նազարէթ:
Իրբեւ մերձեցաւ, ասէ, տօն բաղարջակե-
րացն, որ անուանեալ կոչէին գատիկ, գիտա-
ցին եթէ գայ Յիսուս Քրիստոս ի բազմու-
թիւն ժողովրդեանն ուսուցանել... (էջ 246—
253):

Գ. Արդ ետես յայտ տեղւոջ, եթէ եկեալ
հասեալ է ամենայն արարածք ահանատես
լինել մահուն Որդւոյն Աստուծոյ. եթոյ գա-
չակերտան ի խոնարհագոյն տեղւոջն... (էջ
253—274):

Դ. Նորին ի նոյն խորհուրդ: — Արդ յոյժ
սիրելի է ինձ բանս առաքելոյ, զոր ասէ. Ուր
առաւել եղեն մեղքն՝ առաւել եղեն չորհրդն:
Արդ գայս լսելով եզրարք...:

Ե. Եկն, ասէ, Յովսէփ այբ արզար, ա-
զաա ըստ բնութեան եւ մեծատուն ըստ աշ-
խարհի... (էջ 291—300):

Զ. Արդ յոյժ սիրեմ գտեղին եւ ոչ կա-
միմ հեռանալ ի գրանց գերեզմանին... (էջ
300—313):

է. Արդ անա ասացից զոր ասելոց եմ՝
քանզի յորժամ կայր Տէրն ի մէջ աշակեր-
տացն ի ամեն, յոր եմուտ գրօքն փակե-
լովք... (էջ 313—328):

Ը. Դարձեալ միւսանգամ յայտնեաց Յի-
սուս զանձն իւր աշակերտացն իւրոց ի վերայ
ծովուն Տիրերացւոց. քանզի էին ի միոջ
վայրի... (էջ 328—333):

Թ. Արդ առաւել զայս իմանալի է, եթէ
ծովն Տիրերացւոց ոչ մասն է անբաժանելի
ծովուն, այլ ուրոյն զատ եւ առանձին ա-
նուանի ծովակ եւ ոչ ծով... (էջ 333—354):

Վ. Արդ որդիք եւ եղբարք, հարք եւ
տեարք... ճանաչել զնա նորուն չարչարա-
նացն նշանօք բեւեռացն եւ ի բանից նշանա-
գիր Աւետարանին... զի լուիցեմք զձայն Կե-
նարարին...: Եկաք օրհնեալք Հօր իմոյ...:
= էջմիածին, 975, 296բ—358բ (1195.

վերջը պակաս). ասկէ օրինակուած է, լրիւ
Թ. 666, 253ա—361բ (1709): W. 341 (1709.
Յուլյակ, 787—788)²: Մոսկուա, Լ. Մսե-
րեանց, 12, էջ 50—205 (քաղուածարար):

Հրտ. Մատենագրութիւնք, Բ., էջ 240—
354:

Հրատարակիչք որ եւ է ակնարկութիւն
չեն ըրած, թէ հրատարակութեանս ի՞նչ ձե-
ռագիր հիմ ծառայած է: Վենետիկի Միսի-
թարեաններու ձեռագրաց մէկ համաօտ
Յուլյակը, զոր ունիմ աչքի առաջ, չի մատ-
նանչեր հոն Վարդապետութեանս ձեռագիր
օրինակ: Կը համարիմ, թէ հրատարակիչնե-
րուն տրամագրուած ըլլայ Վիեննայի Թ. 341ի
մէկ պատճենը:

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԱՍԿԷ ՃԱՌՂՆՏԻՐՆԵՐՈՒ ՄԷՁ
Կը դասաւորեմ այբուբենակա՞ն կարգով

1. Ի Յարութիւնն Քրիստոսի Եղիշէի ա-
սացեալ:

Այլ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զատ ի
ներքոյ արեգականս...:

Վ. եւ ժամագրեաց ամենեցուն ժողով լի-
նել առ դուրս նորին գերեզմանի:

¹ Տպագրին ունի. «մեծի պարզելին պնտիկ զոր
ասելոց եմ». Ձեռագիրք (Թ. 341, թղ. 74բ) «պար-
զելին զոր ընդունելոց են երկոտասան աշակերտքն
Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ ընդ Հօր
եւ սրբոյ Հոգւոյն, յախտեանս յախտնից ամէն:
է. Արդ անա ասացից զոր ասելոց եմ...»:

² Յիշատակարանին մէջ կ'ըսուի թէ երկու օրի-
նակ հանուած է էջմիածնի հին օրինակէն (Թ. 975),
մին Աղեքսանդր կաթողիկոսի համար, որ է Թ. 341,
եւ միւսն նոր Ձուղսցի Մովսէս վարդապետի համար:
Իսկ էջմ. 666 գրուած է ի Բջնի:

= էջմ. 994, 169ա—171ա (1409), 3795,
185ա (1190):

= Հրտ. Բ. 297, 29—300, 20:
2. Երանելոյն Եղիշէի Վ.ի սասցեալ
ի Մատնութիւն Տեառն:

Արդ անա հասաք ի կէտն միջին...
Վ. ոչինչ փոյթ արարեալ վասն պատուա-
կան տօնին [փութացան ի հեղուլ զարիւնն
անպարտ...]:

= Վենետիկ 211, 75ա—81բ (1821. Յուլյ.
Բ. 203): 212, 391բ—95ա (ՃԳ. Յուլյ. Բ.
228): Բերլին, 46, 138բ:

= Հրտ. Բ. 242—250, 38: Ա. 234—242:
3. Եր. Եղիշէի Հայոց Վ.ի սասցեալ.
Ի Խաչելութեանն գրոց (այլք՝ ի Խաչելու-
թիւնն եւ ի Յարութիւնն Քրիստոսի):

Արդ իրբեւ ետես դատաւորն եթէ ամե-
նայն բազմութիւնն...:

Վ. եւ ըրոց թէ ծածկեցէք զմեզ (277,
4), այլք՝ եւ նմանի մահ որդւոյն Ամոնայ
մահու որդւոյն Աստուծոյ (277, 10):

= էջմ. 993, 229բ եւ 452ա (1456): 996,
522բ (1442): 1523, 259բ (ՃԵ): 1524, 293բ
(1401): 1525, 369բ (1201): 3791, 248ա
(ՃԵ): Երեւան, 78, 399բ—402 (ՃԲ): Վենե-
տիկ, 215, 54ա—59ա (1829. Յուլյ. Բ. 251):
228, 325բ (1847 = Երեւան, 78. Յուլյ. 466):
Հալէպ, 145, 133ա (ՃԶ. Յուլյ. 256): 146,
438ա (1413. Յուլյ. 262): Վիեննա, 456,
Դ. 1 (մազազաթիսց հատակոտոր միջին
մետրոպեան, Յուլյ. 928):

= Հրտ. Բ. 266, 21—277:
4. Երանելոյն Եղիշէի Վ.ի ի Թաղումն
Տեառն:

Արդ խաւարեցաւ արեգակն ի վերայ մո-
լորելոցն...:

Վ. եւ նոքա ասեն բայ. Գողացան զնա.
պահէին զունայնութիւն եւ զատութիւն:

= էջմ. 1525, 377բ—378բ (1201): 3782,
5ա (ՃԲ. սկիզբը ինկած):

= Հրտ. Բ. 281—304 (°): Վերջաւորու-
թիւնը յարմարցուած կ'երեւայ:

5. Ս. Եղիշէի Վ.ի յաղագս Մեծի Յա-
րութեան (Վենետ. 234 եւ Երուսաղէմի 9
«Եր. Եղիշէի քաղցրարան վարդապետի...»):

Արդ յոյժ սիրեմ գտեղին եւ ոչ կամիմ
հեռանալ...:

Վ. անուանել եղբարք Քրիստոսի եւ ընդ
նմին ասել հայր զԱստուած:

= էջմ. 866, 166ա (ՃԵ): 933, 276բ
(ՃԶ): 991, 286ա: 992, 281բ (1651): 1521,
367բ (1404): 2566, 160ա (ՃԷ): Երեւան, 78,
435բ—437բ: Պարիս, 110, 392բ—394բ (ՃԲ):
116, 280բ—282բ (1307): Վենետիկ, 228,
331բ (1847 = Եր. 78. Յուլյ. 467): 230, 5բ
(ՃԳ. Յուլյ. 483): 234, 253բ (1518. Յուլյ.
530): Վիեննա, 923, 26ա—33բ (1860): 10,
380բ (Յուլյ. 98): 214, 70ա (Յուլյ. 546,
պղս.): 224, 181բ (1428. Յուլյ. 577): Երու-
սաղէմ, 9, 223ա (ՃԴ. Սիւրմէեան, Յուլյակ,
83): 71, 551ա (Սիւրմէեան, անդ, 190ա):

= Հրտ. Բ. 300, 21—306, 34: Ա. 279—
284 (վջ. 305, 8):

6. Եղիշէի Վարդապետի որ յետ Յարու-
թեան:

Արդ Պետրոս զայս խորհուրդ իմացեալ՝
զնայ ի գերեզմանէն...:

Վ. եկեղեցիք հաւատացելոց ի Քրիստոս:
= Վենետիկ, 302, 5ա—31ա (1840. Յուլյ.
1124—1125):

Հրտ. Բ. 310—328:

7. Նորին Եղիշէի որ առ Տիրերեայ ծո-
վուն:

Դարձեալ միւսանգամ յայտնեաց Յիսուս
զանձն...:

Վ. (չէ նշանակուած):
= Վենետիկ, 302, 32ա—69բ (1840.
Յուլյ. 1125):

= Հրտ. Բ. 328 (°):

8. Նորին ի նոյն գրոց սասցեալ ի Թա-
ղումն Տեառն (Պարիսի Թ. 212. ի Խաչելու-
թեան գրոց):

Դարձեալ յետ այսր ամենայնի կատար-
ման...:

Վ. ժողովել առ դուրս նորին գերեզմանի
(այլք՝ եւ զամենայն անօրէնութիւն կարգաւ
կատարեալ զվերնոցն եւ զներքնոցն, 299, 29):

= էջմ. 993, 154բ—156բ (1456): 994,
421բ (1401): Երեւան, 955, էջ 211 (ՃԶ):
Պարիս, 110, 367բ—371բ (ՃԲ): Վենետիկ,
211, 86բ—91բ (1821. Յուլյ. 203): 212,
431ա—433բ (ՃԳ. Յուլյ. 231): 226, 42ա
(ՃԴ. Յուլյ. 405. պղս.): Հալէպ, 146, 227ա
(1413. Յուլյ. 261):

= Հրտ. Բ. 291—300, 20: Ա. 268—278:

9. Եղիշէի (Հայոց) Վ.ի ի Թաղումն
Տեառն:

Եկն, ասէ, Յովսէփ Արիմաթացի...:
Իրբեւ լսես զհամարձակեցան...:

վ. և ժամագրեաց ամենեցուն ժողովել առ դուրս նորուն դերեզմանի (այլը՝ էջ և բազմեցաւ ի փոքր տեղում. 300, 5):

= էջմ. 993, 460ր (1456): 1523, 617ր (ԺԵ): Երեւան, 78, 407ր—410ա: Վենետիկ, 202, 379ա (1637. Յուլ. 95): 214, 42ր (1821. Յուլ. 246): 215, 63ա (1829. Յուլ. 251): 228, 328ր (1847 = Երեւան, 78. Յուլ. 466): Երուսաղէմ, 1, 226ա (Սիւրմէեան, Յուլ. 18ր): Նիկոսիա, 4, 199ր: Բէյ-րութ, Պատրիարքարան, 1, էջ 374:

= Հրտ. Բ. 291, 17—300, 20:
10. Ի Չարչարանի Տեառն:
Եւ առեալ ամին, ասէ, զՅիսուս ի վա- նաց Կայիափայ կապանօք առ Պիղատոս... Ո՛ւր իցէ սրբութիւն ձեր, ով քահանայք...:

վ. և բլրոցն, թէ ծածկեցէք զմեզ:
= Վենետիկ, 211, 81ր—86ր (1821. Յուլ. 203): 212, 418ր—423ր (ԺԳ. Յուլ. 230): 214, 42ա (1821. Յուլ. 246): Բերլին, 46, 145ա: Երուսաղէմ, 1, 225ր (Սիւրմէեան, Յուլ. 18): 71, 431ա—434 (անդ, 189ր):
= Հրտ. Բ. 263—277, 4: Ա. 243—255:
11. Ի Յարութիւնն Քրիստոսի:

Եւ մինչ նա զայս ամենայն նահատակու- թիւնս կատարէր...:
վ. յոր աղագս եւ զինուորքն հրամայե- ցան նոցա ի դատաւորէն:
= էջմ. 996, 533ա (1442): 1525, 385ր (1201):
= Հրտ. Բ. 299, 18—300, 5:

12. Ի սուրբ Առաքեալսն:
Եւ որպէս Պետրոս ի Հոռով հաստատեաց զեկեղեցին...:
վ. ուր երկոտասանքն ընդունելոց եւ զանազան պսակ արքայութեան:

= Վենետիկ, 212, 447ա—բ (ԺԳ. Յուլ. 231/2. Թերթ): 302, 184ա (1840. Յուլ. 1127. րումն պակասորդին էջմիածնի ձեռագրէ մը): Վիեննա, 257, 49ր (Յուլ. 659):
Հրտ. Բ. 348—351, 2:

13. Ի Թագումն Տեառն, ի Խաչելութեան գրոց:
Իրբեւ տեսին, ասէ, Հրեայքն, եթէ խո- նարհեցոյց Յիսուս զգլուխն եւ արձակեաց զոգին...:

վ. նոր պտուղ երեւեալ նորոգապէս լու- սափայլ ամենայն հաւատացելոց:
= էջմ. 866, 147ր—159ա (ԺԵ):
= Հրտ. Բ. 289, 1—299, 30:

14. Ի Խաչելութիւնն Տեառն մերոյ Յի- սուսի Քրիստոսի:
Ի նմին ժամանակի, ասէ, բարձրացաւ Տէրն մեր ի վերայ խաչին...:

վ. և ել անտի վաղվազակի արիւն եւ ջուր:
= Պարիս, 110, 360ա—367ա (ԺԲ):
= Հրտ. 278—289, 9: Ա. 256—267:
14ա. Կանխադոյն Մարիամ Մագդաղի- նացին եկն եհաս... տե՛ս՝ Արդ յոյժ սիրեմ՝:

15. Ի Յարութիւնն Քրիստոսի:
Նախ հրեշտակք ընդունին զյարու- ցեալն...:
վ. ամենայն մասունք... ընկալան զաւե- տիս յուսոյ:

= էջմ. 993, 470ր (1456): 994, 147ա (1409): 1523, 635ա (ԺԵ): 1524, 85ր (1401): 3791, 80ր (ԺԴ):
Հրտ. Բ. 299, 31—306, 37:
16. (Ի Չարչարանս) յԱւագ Հինգշա- բաթի:

Տէրն մեր եւ արարիչն զաւետիս Հոգւոյն հաստատէր լինել ծանօթս եւ բարեկամս...:
վ.:
= Երուսաղէմ, 71, 413ա (Սիւրմէեան, Յուլ. 189ր):
Հրտ. Բ. 246, 35—(°):

«Վարդապետութիւնն ըստ Յովհաննու սիրելոյ ի Չարչարանս եւ ի Յարութիւնն Քրիստոսի» կ'ընդգրկէ Յովհաննու Աւետա- րանին ԺԳ.—ԻԱ. գլուխները, այսինքն Յի- սուսի մատնութենէն մինչեւ Առաքեալներու առաքումն ի քարոզութիւն, զրուած մեկնօ- ղորէն եւ ճառօրէն: Ինքնակաց դորձ մըն է, բաժնուած ըստ էջմ. 975ի ինն գլուխներու: Վենետիկի հրատարակութեան մէջ զանազա- նուած են եօթը գլխաւոր նիւթեր. 1. Ի Չար- չարանս, 2. Ի Խաչելութիւն, 3. Ի Թագումն, 4. Ի Յարութիւն, 5. յԵրեւումն Տեառն ա- շակերտաց առ Տիրեբեայ ծովուն, եւ 7. Ի Քարոզութիւն առաքելոց:

Ճառընտիրներու մէջ ներս առնուած զա- նազան գլուխները, ցոյց կու տան, թէ ո՛ր- քան սիրելի եղած է նախնեաց Եղիշէի այս գրութիւնը: Վարդապետութիւնս անմատ- չելի մնացած է ՆՂԲ.ի հեղինակներուն եւ 1838ի (Մատենադրութեանց Ա.) հրատարա- կութեան:

Եղիշէի Մատենադրութեանց 1859ի տպա- գրութեան մէջ, էջ 206 կը յայտարարուի. «Յաջորդ ճառքը գտանին յանուն Եղիշէի վարդապետի. այլ հարագատութեանն եւ իմաստիցն չիք երաշխաւորել»: Այս ճառե- րու թուին մէջ կը գտնուի նաեւ Վարդապե- տութիւնը: Բայց թէ ի՞նչ զրգապատճառ եղած է այս կասկածաւորութեան, չէ յի- շուած: Յամենայն դէպս անոր հարագատու- թեան երաշխաւոր է Կիրակոս Գանձակեցի, որ զիտէ թէ Եղիշէ բացի Պատմութենէն զրած է նաեւ «այլ Մեկնութիւնս գրոց եւ զՉարչարանացն Փրկչին» (17): Այս գրու- թիւնը հինքը անուանած են «Գիրք Խաչե- լութեան», ինչպէս Պարիսի Թ. 212 և էջ- միածնի Թ. 866 ճառընտիրներու մէջ: Հ. Գ. Չարչարանեան, Պատմ. հայկ. հին Գպր. էջ Իէ, Նիկոմեդիայի մէկ ձեռագրին հետե- լելով, համարած է, թէ Եղիշէ ինքնակաց «Սաչելութեան գիրք» մ'ալ յորինած է:

Paul Vetter³ վերոյիշեալ ծանօթութենէն շարժուած, կը գրէ. «Այս ճարտու հարագա- տութիւնը կրնայ կասկածանայ ենթար- կուիլ, վասն զի ո՞՞ր կը տարբերի Եղիշէի պատմական գործոց յատուկ ո՞՞ճէն, չունի այն սրտաշարժ ծանր, հանդիսական աստութեան կերպն՝ որ հոն կը գտնուի, այլ աւելի ըն- տանեկան է եւ սիրելի բացատրութիւններ յաճախ կը կրկնուին: Թէեւ կարելի է միշտ որ գրութեան այս տարբերութիւնը հետե- ւանք ըլլայ նիւթոյ փոփոխութեան եւ ժամա- նակի փոխուած պարագայից, որով այս ճա- ուերն ալ նմանապէս հարագատ ըլլան: Վասն զի հարագատութեան կողմն է մէկ կողմանէ Թարոր լերան մենակեցաց ճգնական, աս- տուածամերձ կենաց ընդարձակ, կենդանի նկարագրութիւնը, որ կը գտնուի Այլակեր- պութեան ճառին մէջ. եւ միւս կողմանէ Կի- րակոս... բացայայտ կը վկայէ թէ Եղիշէ թո- ղուցած ըլլայ ճառեր Տեառն մերոյ շարչա- րանաց վրայ: Յամենայն դէպս այս ճառերը հին հայ եկեղեցւոյ արդիւնքն են, կը շօշա- փեն հեթանոսական տեսութիւններ, ի մաս- նաւորի աստեղաց պաշտօնը, կը խօսին խստիւ մեռեալը կոծելու դէմ, կը յիշեն ժա- մանակին մարտիրոսները: Ուստի անշուշտ իրաւունք ունինք գասննք եթէ ոչ Եղիշէի

անտարակուսելի հարագատ գրութիւն, գոնէ Ե. կամ Զ. դարու գործեր համարելու» (էջ 112):

Սիմոն Վեբեր նկատի առնելով Եղիշէի տեղեքը, թէ Պետրոս կը քարոզէր «ի բուն իսկ մեծն Հոռոմ, ուր անդ թաղաւորութիւն էր. և (Պաւղոս) յԱթէնս, ուր ճարտարա- պետք փրկիտոփայիցն էին եւ օրէնսդերք աշ- խարաց» (345), կը հետեւցնէ ասկէ թէ Եղիշէ ըլլալու էր 476էն վերջը, երբ Հոռոմ այլ եւս թագաւոր չկար, նաեւ 526էն վերջը, երբ Յուստինիանոս ջնջեց Աթէնքի փրկիտոփայու- թեան դպրոցը⁴:

Ժամանակագրական այս նկատումները արդելք չեն այժմ գրուածքս Եղիշէի հարա- դատ համարելու:

Թէ Վարդապետութիւնս, ինչպէս նաեւ այլ ճառերն, գործնք իրբեւ հարագատ պիտի թուենք վարը, իրապէս Եղիշէի՝ գրչէն բղիթած են եւ ունին իրենց վրայ հեղինակին կնիքը, այժմ արդէն ապացուցուած կարելի է համա- րել: Հ. Ն. Անդրիկեան⁵ նուիրած է այս հարցին մասնաւոր ուշադրութիւն եւ յանգած է եղրակացութեանս. Եղիշէի վարդապետա- կան ճառերը «ժամանակաւ Պատմութենէն յեանազոյն են... որոնց մէջ կը զգացուի ար- դէն հասուն հասակի հանդարտութիւնը»: Պատմագիր «Եղիշէ իր սեփական մակդիր- ներն ու բացատրութիւնքն ունի, գոր ճառե- րուն մէջ ալ կը կրկնէ» (օրինակներ էջ 488— 489. հմմտ. նաեւ Սարգիսեան, Բագմավէպ, 1910, էջ 467, ծան.: Ուրիշ տեղիքի մը վրայ ուշադրութիւն հրաւիրեցի վերը, այն է Եղիշէ, էջ 280 = 176): Կը յիշեմ նաեւ Եղ. 254. «Աշակերտքն անկեալ զնէին անբնդաստ քնով... Տէրն... մատուցեալ ընդաստուցա- նէր զաշակերտան»: Ի Յարութիւնն Ղազարու (Մամբրէ, 15) «զի մի յանկարծակի ընդոս- տիցեն». սոստկութիւնս ճայնին ընդոստոյց արդեօք... ընդոստ յանդնային քնոյ (էջ 30— 31):

«Այս ճառերը, կը գրէ Անդրիկեան, սա- հուն եւ դաշնակաւոր հայերէն մ'ունին. յատ- կութիւնք, որ կը նկարագրեն Եղիշէի ո՞՞ճը, որուն միւս սեփականութիւնքն ալ ունին,

³ P. Vetter, Elisäus, ի գիրս Nirschl, Patro- logie, III (Mainz 1883), 241—262 = Հայկական աշ- խատարութիւնք հայերէնագէտ Պ. Յէթթէրի. Թրգմ. Հ. Յ. Տաւան, Վիեննա 1895, էջ 105—115:

⁴ Simon Weber, Bemerkungen zur pa- lästinischen Ortskunde aus altarmenischen Schriftstellern. Հանդ. Ամս. 41 (1927), 817—826, յատկապէս էջ 822—824:
⁵ Հ. Ն. Անդրիկեան, Եղիշէի ճառական մասնա- գրութիւնը, Բագմավէպ, 63 (1905), 487—490:

ինչպէս զիմանութիւնք եւ բացազարձու-
թիւնք, որոնցմով ստէպ կը կենդանացնէ եւ
կը կոտորէ միակերպութիւնը: Մեկնութեանց
մէջ այլաբանական գրութիւնը կը սիրէ: Հին
Կտակարանի պատմական պարզ գէպերուն
մէջ իսկ, վերացական կամ բարոյական դա-
զափարներ կը տեսնէ ծածկուած: Թիւերուն
մասնաւոր կարեւորութիւն մը կու տայ,
որոնց շուրջը ստէպ կը դառնայ. ու այս բո-
լոր կը յիշեցնեն զՓիլոն, որուն ազդեցու-
թիւնը շատ կրած է»: «Շատ վարդապետա-
կան էջերու քով կան ուրիշ գեղեցիկներ ալ.
այնպիսիք անգամ, ուր զգայուն կը հանդի-
սանայ նաեւ բնութեան գեղեցիկութեանց հան-
դէպ, ինչպէս Թարոր լեւան նկարագրերը»
(անդ, էջ 488—489):

«Այն գրութիւնը, կը գրէ Մ. Փորթու-
զալ⁶, յորում Եղիշէի հանձարոյն մեծու-
թիւնը եւ կորովը դուրս կը ցայտէ առաւել
եւս քան ի Պատմութեանն Վարդանանց,
Քրիստոսի շարժարանաց եւ յարութեան Մեկ-
նութիւնն է՝ զոր շարագրած է ըստ Յովհան-
նու աւետարանի»: «Ի՛նչ պէսպիսի եւ սքան-
չելի հնարքներ եւ միջոցներ կը գտնէ հեղի-
նակին բեզմաւոր միտքը: Իւր զրչին տակ
աւետարանչին խօսքերը զարմանազան երկ-
ւոյթներ կը ներկայացնեն մեզ: Հոնտարական
եւ բանաստեղծական ձեւերն յաճախ են եւ
յոյժ աշխատեալ. եւ երբ բնագիրը թոյլ տայ
նմա, շղթայի գարնուած հզօր արծուի նման,
որ կտպերը յա՛նկարձ թուլցած կամ արձա-
կած գտնէ, կը թեւակոխէ ու կը սաւառնի
այերց կամ անդնոց մէջ, եւ այնպիսի վսե-
մութեան մը կը հասնի, որոյ նմանը չեմք
տեսներ նոյն ինքն Վարդանայ Պատմութեան
մէջ, որ սակայն հո՞՞ն է վսեմի ընտիր օրինա-
կօք»:

Ինչպէս Պատմութեան, նոյնպէս Մեկ-
նութեանց եւ ձառերու մէջ, կը գտնուի
Եղիշէ Փիլոնի ազդեցութեան տակ նաեւ
Վարդապետութեան մէջ (էջ 245, 279—284 =
Փիլոն, Յաղագս օրինացն այլաբանութեան,
էջ 165—169): Հ. Բ. Սարգիսեան⁷ կը տեսնէ
անոր ձեռքին տակ նաեւ Գրիգոր Նազիան-
զացուց գործերը. «Յէջ 292—293, հատուածն՝
ուր Աստուծոյ կենդանի պատկերն ի գէժս

⁶ Միւրայլի վաղայ Փորթուզալ, Եղիշէ, Վենետիկ
1903, էջ 66—67. Հմմտ. նաեւ էջ 67—71:
⁷ Հ. Բ. Սարգիսեան, Եղիշէի ի թաղումն Քրիս-
տոսի ճառը եւ Նիկիոյի մասնաւոր Աւետարանն, Բագմալէպ,
68 (1910), 465—478, 543—557:

մարդոյ կը նկարագրուի, այս ինքն «վասն
մարդոյ Աստուած մարդացեալ եւ վասն Աս-
տուծոյ՝ մարդ աստուածացեալ» (էջ 306,
ուր Աստուած հայր կ'անուանուի Յիսուսի
Քրիստոսի եւ մեր՝ գեղեցիկ խորհրդածու-
թիւնքն. էջ 308—309) ընդարձակ հատուածն,
ուր զլուսն առն Քրիստոս կը նկարագրուի եւ
զլուսն Քրիստոսի՝ Աստուած, հանդերձ աս-
տուածախօսութեամբ ի վերայ սուրբ Երրոր-
դութեան, Գրիգոր Աստուածարանէն եղած
փոխառութիւնք են» (Բագմալէպ, 1910, էջ
473): Բայց մատնանիշ չէ ըրած, թէ Աս-
տուածարանի ս՞ր գրութիւնները նկատի
ունի:

Կարդացած է ան Եւսերիոսի Եկեղեցա-
կան Պատմութիւնը, յատկապէս է. 17 դրուիը
(աւետարան կնոջ անդրին ի Պենագա, էջ 279)
եւ Բ. 1 եւ 13 (Սիմոն մոզ, էջ 347): Հ. Բ.
Սարգիսեան⁷ երեւան բերաւ, որ Եղիշէ աչքի
առաջ ունեցած է նաեւ «Նիկիոյի մասնաւոր Աւե-
տարանն», որ է «Յիշատակարանք որ եղևն
վասն Քրիստոսի առաջի Պոնտացոյ Պիղա-
տոսի»: Նկատի առնուած է յոյն բնագիրը,
որ աւելի լիակատար հասած է (էջ 468—472):
«Համեմատութիւններէս արդէն յայտնապէս
կը տեսնուի Եղիշէի եւ Նիկիոյի մասնաւոր Աւե-
տարանին մէջ եղած սերտ ազդեցութիւնը: Միայն թէ
հայ պերճարանը աղատ կերպով վարուած է
իր աղբիւրին հետ» (էջ 472): Կօսքը Քրիս-
տոսի ի Գոթիս էջքի մասին է: Ծանօթ եղած
է նաեւ այլ անվաւերական Պատմութեանց:
«այսպէս Պետրոսի եւ Պաւլոսի, Թովմայի եւ
մանաւանդ Անդրէի եւ Մատթէի Գործոց,
որոնք բացայայտ ի վիպութիւն կոչուած են,
միայն կ'երեւայ թէ Անդրէի նկատմամբ եղած
տեղին (էջ 346) շիթութեամբ է Մատթէի տեղ-
ւոյն հետ» (Vetter, անդ, 113—114, ծան.):
Եղիշէի խօսքն է. «Որպէս յայտնագոյն ցու-
ցանէ մեզ պատմութիւնն Անդրեայ, որ
ապրեցաւ ի ձեռն Մատթէոսի աւետարանչի»
(346)⁸: Իսկ էջ 345 կը գրէ. «Գտանի եւ Յով-
հաննէս յԱսիա, որպէս եւ Անդրէաս ի կող-
մանս հիւսիսոյ»:

Ի՞նչ կ'իմանայ Եղիշէ «ի կողմանս հիւ-
սիսոյ» ասութեամբ: Վիպարանութեան հա-

⁸ Մատթէոս, որ Մարգարեաց աշխարհին մէջ
կայանաւորուած էր, ապառքաւ ի ձեռն Անդրէասի,
որ նաւարկելով Թեսալոնիկէն հասած էր առաքելոյն
օղնութեան: Անկանոն գիրք առաքելականք, Վենետիկ
1904, էջ 124—145. «Յաղագս Անդրէի առաքելոյ եւ
նորին սքանչելեաց, զոր Տէր արար ի ձեռն նորա եւ
Մատթէի ի Մարգարեաց աշխարհն»:

մաճայն Անդրէաս իր քարոզութեան շրջանն
ունէր Թեսալոնիկէ, ուր եւ նահատակուե-
ցաւ: Հոս առանց տարակուսի «աշխարհն
Մարգարեաց» կ'ակնարկուի, ուր գնաց Ան-
դրէաս վրկելու Մատթէոսը: Մովսէս Խորե-
նացոյ ընծայուած Աշխարհացոյցը Մարգա-
րեաց աշխարհը Վրաստանի եւ Ալանաց աշ-
խարհի միջեւ կը նշանակէ⁹, ճշդիւ «ի կող-
մանս հիւսիսոյ»: Ասկէ կարելի է թերեւս
հետեւցնել, թէ Եղիշէ ծանօթ էր այս Աշխար-
հացոյցին: Վրական աւանդութիւնը, թէ Ան-
դրէաս Վրաստանի առաքելն եղած ըլլայ,
ինչպէս Ի. Զաւարով ապացուցուցած է,
ԺԱ. դարէն է¹⁰:

Եղիշէի, տեղիքս «զի ի խոր բերդոյ շուրջ
դրանին արմատախիլ զմնասակար սէյն քա-
ղեցուք» (էջ 243), կը յիշեցնէ Գանդրայի
Ժողովին Կանոններու մէջ մուծուած յաւե-
լուածը «ի բաց կտրեալ զմնասակար զգաղձն
եւ քաղեալ գորոմն ի ցորենոյն» եւ ասկէ
Շահապիվանի Ժողովին Կանոններու Նախա-
դրութեան մէջ առնուած՝ «ոչ ոք էր, որ քա-
ղէր գորոմն եւ սրբէր զգաղձն մնասակար,
քանզի արմատացեալ էր սէյն»¹¹:

Վերագոյն հաստատեցինք թէ Եղիշէի
վարդապետութիւնը գտաւ հայ վարդապետ-
ներու հաճութիւնը, այնու որ մեծ թուով
ընդարձակ զլուսններ հիւրընկալուած են Տօ-
նականի կամ ձառնախրի մէջ արդէն վաղ
ժամանակ: Այդ գրութիւնը իր ձեռքն ունե-
ցած է Զաքարիա կաթողիկոս. եւ իրմէ յա-
ռաջ Յովհ. Իմաստասէր կաթողիկոս իր Ապա-
ցոյց յերկուց բնութեանց ասել զգրկելն եւ
կամ մի բնութիւն» (Գիրք Թղթոյ, 29—40).
այս տեղ կը գտնենք Եղիշէն առնուած տե-
ղիքներս.

ա. «որ եւ զըլուացն դանց առնէ զամ-
պարչտութեամբ», 29 = Եղիշէ. «Այս ընդ-
դիմութիւն եւ զըլուաց (տպ. ընդ դ.) ամ-
բարչտութեամբքն դանց առնէ» (258):

բ. «Ձերկրիս խորհելով ընդ նոյն շա-
ղեալք (Յոբ, ԺԸ, 8), ի նոյն խրդեմի կու-

⁹ Մ. Խորենացոյ Մատնագրութիւնք, Վենետիկ
1865, էջ 604. «Թուլք, Խուսք, Մարգարեք»:
¹⁰ Ив. Джавахов, Проповѣдническая дѣя-
тельность ап. Андрея и св. Нины въ Грузіи:
Журналь министерства народ. просвѣщенія, 1901,
77—113. Հմմտ. նաեւ Ա. Կ. Ինեւան, Կիրիոն կաթո-
ղիկոս, էջ 283:
¹¹ Հմմտ. Ալիքեան, Շահապիվանի Ժողովին Կա-
նոնները, Հանդ. Ամս., 1949 (Միւրթար տունագիրք),
էջ 101:

րութեան հաղրս» (31) = Եղ. 261. «Նոյն նա
բեզ զըլուացն զխրդեմի կուրութիւնը»:
Լրբենի լինող (33) = Եղ. 66:

Յիշեմ ի վերջոյ, թէ Վարդան Այգեկցոյ
«Գիրք հաստատութեան եւ արմատ հաւա-
տոյ» հաւաքածոյքին մէջ յառաջ բերուած է
կոչուած մ'ալ¹² «Եղիշէի Հայոց վարդապետի.
Աստուած միայն մարդասէր եւ մարդ միայն
աստուածասէր. Աստուած մարդոյ եւ մարդ
Աստուծոյ. վասն մարդոյ Աստուած մարդա-
ցեալ եւ վասն Աստուծոյ մարդ աստուածա-
ցեալ», որ առնուած է Եղիշէի այս Վարդա-
պետութեանէն, էջ 292/3: Նոյնը՝ Ղազար
Զահկ. Գրախո ցանկալի, 141:

Վարդապետութեանս վերջին, ի Քարո-
ղութիւնն Առաքելոց մասէն քաղուածքներ
տուած է Vetter (J. Nirschl, Lehrbuch der Pa-
tologie und Patristik, III, Mainz 1885, S.
261—262):

7. Եղիշէի Երիցու ասացեալ յալագս
Թարք լերիցն:

«Սրբասիրի տեսնն Եղիշէի քահանայի եւ
ճգնաւորի եւ միայնակեցի ի Թարք լերին
Յայտնութիւն Տեսնն առ Պետրոսեանց եւ ի
մեծ աւուր Վարդապետին:

Մինչդեռ երթային նոքա ի ճանապարհի՝
ասէ Տէր մեր ցերկոտասանն. Զո՞ ուստեք
ասնն զինէն մարդիկս թէ իցեմ: Պատմեցին
նմա զարտաքնոցն, զի այլ ընդ այլոյ կար-
ծէին...:

վ. Եւ ես տառապեալս քան զամենայն
մարդ, որ հետեւեցայ հետիոտս ընդ տէրու-
նեան շաւիղն ի լեառն անդ եւ աչօք տեսի
զԺողով սքանչելի եղբարց, աղաչեմ զընթեր-
ցողսդ եւ զլսողսդ, աղօթս արարէք ի վրայ
իմ եւ ձեր հասարակ. ընդ նոսա ապրեսցուք
յահաւոր դատաստանացն Աստուծոյ եւ երկ-
նից արքայութեանն արժանի լինել ի Քրիս-
տոս Յիսուս ի Տէր մեր...:

= Պարիս, 117, 74բ—81բ (1307):

Հրտ. Սովետր Զայկականք, ԺԸ (Վենե-
տիկ 1854), 3—68: Եւ ասկէ՝ Մատենադրու-
թիւնք 1859, էջ 212—239:

Պարիսի Թ. 117 միակ ծանօթ ձեռագիրն
է, որ պահած է գրուածքս. այս ձեռագրէն
հրատարակած է Հ. Ղ. Ալիշան առաջին
ապագրութիւնը, թէ եւ չէ յիշած գաղափար

¹² Ա. Միւրթեան, Յուցակ հայ. ձեռ. Երրորդայի
մասնաւոր Հաւաքութեանը, Ա., Պարիս, 1950, էջ 74:
E. Tisserant, Codices Armeni Bybliothecae Va-
ticanae, Romae 1927, p. 53.

օրինակը: Ճառիս վերջին մասը ինքնակայ կը գտնուի բազմաթիւ ձեռագիրներու մէջ հետեւեալ խորագրով եւ սկզբնաւորութեամբ.

7ա. Եղիշէ երիցու ասացեալ յաղագս Թարբը լերինն:

Վասն լերինն զեղեցկութեան եւ վայրացն վայելչութեան եթէ կամիք արտոբերով ունկն դնել...

Վլ. եւ ես տառապեալս... (ինչպէս վերագոյն):

— Վիեննա, 99, 15ա (ԺԹ. Յուլի, 369): 269, 260ր (1720. Ճաշոց. Յուլ. 688): Երուսաղէմ, 2561, 656ր (1670): Երեւան, 724, 348ր (1296): Էջմիածին, 1486, 93ա (1597): 2682, 57ա (1825, օրինակուած 1318ին գրուած ձեռագրէ): Կար., Յուլի, 1675 (1431. Տմտ: Սամուէլ Անեցի, էջ ԺԳ): Վենետիկ, Կիրակոս Գանձակեցոյ Բ. օրինակ, էջ 550: Սոկրատի Ա. օրինակ, էջ 491: Հրատարակուած՝ Արարատ 1 (1868), 123—125. Տմտ. անդ, 89—92):

Կը համապատասխանէ Սոփերք ԺԸ, էջ 59—68, Մատենագրութիւնը, էջ 236, տ. 9—239:

Եղիշէ նկատի ունի հոս Մարկոսի Ը. 27—Թ. 8. զոր կը մեկնարանէ. ի կատարածին կու տայ Թարբը լերան նկարագրութիւնը, յայտնելով թէ ինքը ուրիշ ուխտաւորներու հետ այցելած է այդ լեռը (էջ 236—239):

Ճառս գրած է Եղիշէ Հայաստանի մէջ, ինչպէս կրնանք հետեւցնել տեղիքէս. «Տեսանեմք իսկ աստէն եւ ի մերում աշխարհիս՝ բազումք վարեցեալք առաքինութեամբ անսխալ հաւատովք ըստ առաքելական կանոնին, յորոց ցնծացեալ բերկրի սուրբ եկեղեցի հեթանոսաց: Չայս հաւատս յանձին պահելով զեղեցիքն յուսումնասիրութեան ուխտաւոր մանկունք Հայոց մեծաց զանձինս պարպեցուցեալ ի վաճառաչս օգտից. ոչինչ ընթանան զհետ ընչաւէտ մեծութեան, այլ գործ հանապարդոյ այնպիսեացն՝ պահք եւ աղօթք, զանձինս պահել յամենայն ողջսպան փասուց» (232):

Նշիքի հեղինակը, յանուանէ Հ. Մ. Ալեքեւրեան, Նախագումն, էջ 11ր. որոնք ձառիս երկրորդ մասն (7ր) միայն աչքի առաջ ունեցած են, կը յիշեն զայն յանուն «Եղիշէ երէցի» զխտորութեամբս. «Օրինակն էր անհարթ գրչի. ապա քէ ոչ՝ ոմն չէ շատ հեռի

ի հառէ Միանձանց»: Հ. Ղ. Ալիշան հրատարակած է զայն յանուն «Եղիշէ քահանայի», առանց որ եւ է խօսք ընելու անոր անձնաւորութեան վրայ. իսկ Հ. Գ. Զարբանեւեան, Պատմութիւն Դպրոցութեան, էջ 782 խօսած է անոր մասին ուրոյն տեղ մը, ուստի Եղիշէ վարդապետէն տարբեր մատենագիր համարած է Եղիշէ քահանայն. ոչ իրաւամբ:

Գրուածքս Եղիշէի լուսագոյն գործերէն մէկն է: Վերագոյն առիթ ունեցանք յառաջ բերել զրուածքէս տեղիք մը, ուր Թարբը լերին նկարագրութիւնը կու տար. եւ գրութեան ժամանակը իրը 630ին ենթադրեցինք:

Ինչպէս իր միւս գրութիւններու, յատկապէս Միանձանց ձառնի մէջ, նոյնպէս հոս Փիլոնի աղղեցութեան տակ է, տես համեմատութիւններ համադրուած Կիւլխէրեանէ՝ Եղիշէ, էջ 168—169. յատկապէս Փիլոնի յազազս վարուց կենաց տեսականի (էջ 11—15, 27—29 = Եղիշէ, 236—239, 257): Եւ Սահակ եպ. Խաչատրեան, Փիլոն Երրայեցի եւ Եղիշէ. Բիւրակն, 1899, Թ. 50—52, էջ 788—790:

8. Սրբոյն Եղիշէի Հայոց վարդապետի ի Յարութիւնն Ղազարու:

Ամենայն նշանք աստուածայինք Տեսոն մերոյ կարեւորք են. եւ են որ եւս կարեւորք...

Վլ. Մարգրիկ յանձատական կեանս պարուց հրեշտակաց միարանին...

— Երեւան, 78, 318ա—23ր (ԺԳ): Էջմիածին, 1525, 303ր (1201): 3782, 136ր (ԺԲ): 2523, 214ա (ԺԳ): Էջմ. ԳԵ. 130, ծգ: Վենետիկ, 228, 352ա (1847, Երեւանի Թ. 78էն արտադրուած. Մարգրիսեան, Յուլ. Բ. 468): Պարիս, 110, 305ա—311 (ԺԲ.) եւ ասկէ՝ Վենետիկ, 210, 169ա (1825. Յուլի, 199) անանուն են: — Վենետիկ, 202, 286ա—72 (1627. Յուլ. 87), ասկէ՝ Բէյրութ, Պատրիարքարան, 1, 577ա. Երուսաղէմ, 154 եւ 917. (Յուլի Սաւալանեանի) Կ'ընծայեն Մամբրէի: — Իսկ Պարիս 116, 216ր—222ր (1307) եւ Վենետիկ, 212, 337ր—343ա (ԺԳ. Յուլ. 225) կը վերագրեն Յովհ. Ոսկերբանի:

Պարիսի Թ. 116 եւ Վենետիկի Թ. 212 ունին խորագիրս. «Երանելոյն Յոհաննու Ոսկերբանի Կոստանդնուպոլիսի Եպիսկոպոսապետի ասացեալ ի Յարութիւնն Ղազարու:

Ամենայն աստուածային նշանք Տեսոն մերոյ...»:

Իսկ Վենետիկ, Թ. 202 եւ այլք վերնագիր կը կրեն.

Երանելոյն Մամբրէի վերծանողի ասացեալ ի Յարութիւնն Ղազարու, Յովհաննու Աւետարանին Մեկնութիւնէն:

Ամենայն աստուածային շնորհք Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի, (են) որք կարեւորք են եւ (են) որ եւս կարեւոր...:

Այսպէս ալ հրատարակուած է.

Հրտ. Կորիւն վարդապետի, Մամբրէ վերծանողի եւ Դաւիթ Անյաղթի Մատենագրութիւնը, Վենետիկ 1833, էջ 35—54: Բ. տպ. Մամբրէ վերծանողի ճառք, անդ, 1894, էջ 9—34:

Թարգմ. Mambre Verzanogh, Homilie über die Auferweckung des Lazarus. Aus dem Armenischen übersetzt und herausgegeben von Simon Weber: Ausgewählte Schriften der armenischen Kirchenväter. II. Band. München 1927, S. 3—27 (Bibliothek der Kirchenväter, 58):

Առաջին տպագրութեան Յառաջարանին մէջ կ'ըսուի, թէ հրատարակիչը ձեռքի տակ ունեցած են ճառէս 7 օրինակ, անոնցմէ երկուքը վերագրուած են Յովհ. Ոսկերբանի. երկուքն ալ նոտրագիր եւ անթուական: Ուրիշ երկու օրինակ ալ, մին 1637էն (= Թ. 202) նոտրագիր, եւ երկրորդը անթուական եւ բոլորգիր, կ'ընծայեն Մամբրէի. իսկ միւս երեք ձեռագիրներէն մին 1117էն է, երկրորդը անթուական եւ երրորդը անթուական նոտրագիր, հեղինակի անուն չեն կրեր: Այս եօթը ձեռագիրներէն վերջինը Տօնապատճառ մըն է. եւ որովհետեւ անոր ընծայած բնագիրը միւսներէն կը խոտորէր, կարեւոր համարուած է առանձին հրատարակել: Անոր սկզբնաւորութիւնն է. «Վեց շարաթս այս զվեցհազարն նշանակէ...» (Ա. տպ. 54—75. Բ. տպ. 35—58): Ա. հրատարակութեան սկիզբը կը ծանօթագրուէր. «Չայս ճառ այսպէս առանց անուան օրինակաբեր յերկուս Տօնապատճառս գտեալ, յորոց միումն պակասէր սկիզբն, յարեմք զկնի Մամբրէի ճառին. զի բազում ուրեք նովին իմաստիւք ընթանայ ի բանսն. այլ թէ ա'յս իցէ բուն հարագատ ծնունդ մտաց նորա, եւ թէ առաջինն, անմարթ է մեզ ճշդիւ գատաստան առնել զսմանէ... այլ մեք ժամանա-

կին թողումք հաւաստել զճշմարտութիւնն» (էջ 54): Այս ծանօթութիւնը անփոփոխ կրկնուած է Բ. տպագրութեան մէջ 1894ին: Ուստի այնպէս կ'երեւայ թէ 60ամեայ շրջանը բաւական չէ եղած «հաւաստել զճշմարտութիւնն»¹³:

Հրատարակիչը տարակուսի տակ ձգած կ'ըլլան այսու թէ առաջին եւ թէ երկրորդ ճառին հարագատութիւնը Մամբրէի անուան: Յամենայն դէպս Ա. ճառին համար ձեռագրական վկայ կայ. բայց երկրորդին համար կը պակսի նոյնը: Բ. ճառս, ինչպէս մտադիր ընթերցումը ցոյց կու տայ, խմբագրութիւն մըն է, ասկէ անկէ առնուած հատուածներէ, ուր կը տեսնուին նաեւ Ա. ճառէն կտորներ: Այն անանուն ցուցակագիրը, որ կազմած է Վենետիկի Միթիթարեանց ձեռագիրներու համառօտ Յուլիակը (1833էն ետքը), զոր եւ ունիմ ձեռքիս տակ, արդէն ուշագիր եղած էր այս կէտին, եւ կը ծանօթագրէր.

«Ի Յարութիւնն Ղազարու. «Ամենայն աստուածային շնորհք (կամ նշանք):

Ա. ճառ. Գ. 509 [Թ. 202]:

Բ. Ոսկեր. ԺԵ. 283—288. վերջին մասն միայն. բաց յառաջին երկուց տողիցն: [Թ. 254]:

Գ. ճառ. ԺԱ. 339 [Թ. 210]:

Դ. ճառ. ԺԳ. 272 յանուն Ոսկեր(երանին): [Թ. 212]:

Գ. եւ Դ. ձեռագիրներու մասին կը գրէ զխոտորութիւնս.

«Ի կատարածին տարբերին միօրինակք. եւ հաստուածն՝ Գիտեմ զի ի միտս ձեր կամիք հարցանել զիս, մինչեւ ցկատարածն՝ է բազումք վերջին մասինն խմբագիր ճառին Յարութեան Ղազարու «Վեց շարաթս այս», որ կայ ի շարս անանուն ճառից Տօնապատճառին. որ եւ վերիպակաւ տպագրեալ է յանուն Մամբրէի ի Դաւիթ Անյաղթին յէջ 55»:

Ի Յարութիւնն Ղազարու ճառը, որ Ոսկերբանի ընծայուած էր Թ. 212 ձեռագրին մէջ, բայց կը պակսի Ոսկերբանի գործերուն մէջ: Նախընտրած են առաջին Հրատարակիչը Մամբրէի անուամբ լոյս ընծայել: Բ. տպագրութեան հրատարակիչը (Հ. Ղ. Ալիշան) թէեւ ունեցած է ձեռքի տակ Թ. 210, ուր ճառս Եղիշէի անունը կը կրէր, բայց նկատի առնուելով, որ «կուր եւ սեղմ ճար-

¹³ Հմտ. նկատողութիւնս Հանդ. Ամս. 1904, էջ 42:

տասանական ոճով՝ հյորագրուների եւս՝ քան քաղցրարան իւրում (Եղիշէի) գրչի» կը պատշաճի, այդ «հյորագրոյն» համարած են Մամբրէ վերձանող, որուն անունը կը կրէին թ. 202 եւ 210: Թէ չ. Ալիշան Մամբրէի ո՞ր գրուածքի մէջ վեր հանած է անոր ոճի այդ նկարագիրը, ինձ անձանօթ կը մնայ: Չ. Գ. Զարբանեւան ալ կը գրէ թէ «հաւանական կը կարծուի թէ սխալմամբ Ոսկերեւանի կ'ընծայուի այս ճառը, այլ իրեն հանձարոյն նախանձորը եւ հետեւող Մամբրէի գրչին եւ սրտին արդիւնքն է» (Պատմ. հայկ. ճին գպրութեան, Վենետիկ 1897, էջ 389-իսկ էջ ԻԲ կը յիշէ պարզապէս թէ ճառս «ի ճառընտիրս ինչ Եղիշէի ընծայի»):

Բայց միտ չէ գրուած, որ Կիրակոս Գանձակեցի երբ կը յիշէ Մամբրէի ճառն («ասաց ներքողեան յօրն Արմաւենեաց, ի դալուստն Քրիստոսի յերուսաղէմ յաւանակաւ, էջ 17»), որ եւ է խօսք չէ բրած Ղազարու Յարութեան ճառի մասին: Այս լուծութիւնը անշուշտ մոռացութեան արդիւնք չէր:

Առաջին անգամ Նորայր Բիւզանդացին էր, որ յայտարարեց. «Գեղեցիկ ճառն ի Յարութիւնն Ղազարու, ըստ ոմանց Մամբրէի, ըստ այլոց Եղիշէի, կը սեպհականուի Եղիշէի, պատմագրին Վարդանայ» (Բաղմովէպ, 1905, էջ 227. հմմտ. նաեւ Չ. Ն. Անդրիկեան, անդ, 1908, էջ 83, ծան.): Նորայրի այս վճիռը կը հաստատեն այլ ընտրելագոյն ձեռագիրներ:

Թէ ճառիս հեղինակը նոյն է Եղիշէի հետ, որ գրած է «Վարդապետութիւնը», կ'ապացուցուի նաեւ այն իրողութեամբ, որ Մարկոսի Ե. 35—42 յիշուած «Ժողովրդապետը» (յն. ἀρχισυναγωγος, ըստ archisynagogos) այս երկու գրութիւններու մէջ ալ թարգմանուած է «քահանայապետ», առանց տարակուսի Եփրեմի Մեկնութեան Աւետարանի ազդեցութեան տակ. տեղիքներն են. Եղիշէ 249. «Եթէ ի նային հարցանէք, զորդի այրւոյն միամօր ի մեռելոց յարուցեալ տեսանէք (Ղուկ. է. 11). Եթէ ի տան քահանայապետին մասնէք զնոյն տեսանէք» (Մարկ. Ե. 41): Ղազարու Յարութեան ճառին մէջ (Մամբրէ, 29) կ'ըսուի. «Ի տան քահանայապետին յորժամ յարոյց զլուստը նորա ի մեռելոց...: Մոյնպէս ի նային քաղաքի»: Եփրեմ (Բ. 81). իբրեւ լուա տեսատեսն զի ասաց նա ցքահանայապետն. Հաւատա եւ

կեցցէ դուստրն քո»:

Եղիշէ աչքի առաջ ունեցած է նաեւ Եւսեբիոս («Սերերիանոս») Եմեսացոյ եւ Հիւպոդիտոսի ճառերը: Առաջինը իր ի Տնօրէնութիւնն Փրկչին ճառին մէջ կ'անդրադառնայ Ղազարի Յարութեան. եւ կը գրէ. «Մատեալ Մարթա առ վէմն եւ ասէ. Տէր, հոտեալ է աւասիկ, քանզի չորեքօրեայ է: Այլ Կենարարն, քանզի զօրութեանն տեղեակ էր, զայդ իսկ կամ իմ ուսանել ի ձէնը, ասացէք եւ յաճախեցէք զասելն՝ թէ հոտեալ է. հաստեցէք թէ մեռեալ է, զի եւ յարութիւնն ճշմարտիւ քարոզեցի...: Հայր, ասէ, գոհանամ զքէն, զի լուար ինձ: Բուժս (կամ բուժս) իմն ի բանիս գտանեն հերձուածողացն աշակերտք. վարդապետի ի վերայ յարձակեալ, Տեսանե՞ս, ասեն, ո՞րչափ ի միջի կայ. զի մինն աղաչէ, եւ մինն աղաչի. մինն պողատի եւ մինն պողատանաց անսայտեսանե՞ս, զի աղբիւր սքանչելեացն հայր է, եւ շնորհէ որդւոյ զօրութիւն սքանչելեացն» (էջ 15—16):

Եղիշէ կը մեկնէ նոյն տեղիքները. «Ձեռն վկայութիւն վկայեաց եւ քոյր մեռելոյն. Տէր, ասէ, արդ հոտեալ է, քանզի չորեքօրեայ է... Կրկնեա՛ եւ երեքինեա զոյն վկայութիւն, զի պապանձեալ լիցին բերանք հայհոյող մարդկան, յորժամ զչորեքօրեայ մեռեալն կենդանացեալ տեսցեն ի մէջ հրապարակաց (26—27)... Հայր, գոհանամ զքէն... վասն կորստեան ձերոյ միաբանեցէք, պատմելով զամօթալի վարդապետութիւնդ. ոմն, ասեն, կարգայ եւ ոմն, ասեն, լսէ. ոմն աղաչէ. ոմն խանդադատէ եւ զոմն ի խանդադատանս աճէ. իբրեւ ոչ ունի ի խանութիւն յարութեան, զչայր կարգայ յօգնակալութիւն վասն մեռելոյն» (Մամբրէ, էջ 28): Վերջին տեղւոյս անդրադարձած է նաեւ Չ. Մ. Աւերեան. «Մամբրէ գրեթէ զոյն բանս երկրորդէ ի ճառն յարութեան Ղազարու»: Սերերիանոս, էջ 16, ծան. 1):

Իսկ Հիպոդիտոսի ճառն ի Յարութիւն Ղազարու չունիմ տրամադրութեանս տակ: Չ. Գ. Զարբանեւան, Մատենադարան, էջ 556 յառաջ բերած է ճառէս տեղիքս. «Հրամայեաց նոցին իսկ Հրէիցն ձեռօք ի բաց թաւալեցուցանել զվէմն, զի ինքեանք վկայք եղիցին յինէն եղելոց նշանացն»:

Եղիշէ «Որոց էր սովորութիւն դորձել, գերկիր, նոցուց եւ հրամայեաց. Դուք,

ասէ, առէք զքարդ ի վեր... աչք ձեր վաղիւն վկայ լիցին... ի մէջ այսչափ բազմութեան վկայից եւ զյարութիւն եւ զտեսութիւն մեռելոյդ յուրաստ ոչ կարէք առնել» (Մամբրէ, 26):

Եղիշէ նաեւ ճառիս մէջ ունի փոխառութիւններ Փիլոնէն. կը յիշեմ տեղիքս.

Փիլոն, Յաղագս վարուց կենաց տեսականի, էջ 18. «Իբրեւ զմանրագոր՝ զանպակն ըմպելով, թմբրեալք եւ թրջեալք եւ զմրբեալք»: Եղիշէ. «Միթէ ի մանրագորս՞ թմբրեալ իցէ, եւ կամ ի սաստիկ անպակաց զմրբեալ իցէ» (Մամբրէ, էջ 14):

9. Սրբոյն Եղիշայի վարդապետի Բանխրատու յաղագս Միանձանց:

Մարդիկ որ են ի մարմնի եւ կամօք ետուն զանձինս իւրեանց յաստուածպաշտութիւն...:

Վջ. այլ թեւածեալ թուոցար յանմարմին աշխարհի եւ հանդուցեալ դադարեցեր յանապական ուրախութիւնսն...:

= Պարիս, 178, 76բ—79բ (ԺԱ): Վենետիկ, 201, 374ա (ԺԳ. Սարգիսեան, Յուցակ, Բ., 54): Վիեննա, 299, 48ա—54բ (ԺԹ. Տաշեան, Յուցակ, 728):

Հրտ. Մատենագրութիւնք, Ա., 213—219. Բ., 159—165: Նոյնը Եղիշէի Պատմութեան փոքրագիր տպագրութիւններու վերջը, այսպէս 1828, էջ 363—381 եւ այլն:

Թարգմ. Յ. Յ. Անուշեանց, Եղիշէի յաղագս Միանձանց (աշխարհարարի թարգմանուած), Սիոն 1868, էջ 112—117:

Simon Weber, Ausgewählte Schriften der armenischen Kirchenväter, Bd. II. München, 1927, էջ 287—298:

Եղիշէ կը նկարագրէ հոս «ի կողմանս հարաւոյ», Եգիպտոս, Պաղեստին եւ Սինայի լեռան միանձնաւոր եւ վանական կրօնաւորներու խտտակեաց կեանքը վառ գոյներով եւ կը բաղդատէ անոնց կենցաղին հետ Հայաստանի վանականներու թոյլ կենցաղավարութիւնը, կը յորդորէ ապա զանոնք վերադառնալ կրօնաւորական հրահանգներու՝ աղքատասիրութեան եւ վշտամբեր կեանքի, հաւատարմարար հետեւելու այն բարձր նպատակին, որուն համար հրաժարած էին աշխարհէ:

Եղիշէ շատ ազդուած է ճառիս մէջ Փիլոնի «Յաղագս վարուց... տեսականի» գրուածքէն, ուր Հեսեանց կենցաղավարու-

թիւնը նկարագրուած էր. տեղ տեղ բառական փոխառութիւններով: Այս պատճառաւ ալ Նորայր Բիւզանդացի թոյլ տուած է իրեն գրել տողերս. «Կը պարսաւեմ զԵղիշէ՛ ոչ անոր համար որ զճառն Յաղագս Միանձանց յօրինած է հետեւութեամբ Փիլոնի Երրայցեոյ ճառին Յաղագս Տեսականի, այլ անոր համար որ նիւթապէս ընդօրինակած է ի Փիլոնէ այլ եւ այլ նախադասութիւններ, զոր օրինակ. «Ուտեն՝ զի մի քաղցիցեն, եւ ըմպեն՝ զի մի ծարաւեսցին» (էջ 160, տ. 20—21) բառ առ բառ ի ճառէն Յաղագս Տեսականի. «Ուտեն՝ զի մի քաղցիցեն, ըմպեն՝ զի մի ծարաւեսցին» (էջ 16, տ. 1): Մշակ, 1898, թ. 216:

Անդրագոյն համեմատութիւններ կատարած են Սահակ եպ. Սպապեան, Փիլոն Երրայցեցի եւ Եղիշէ. Բիւրակն, 1899, էջ 788—791. եւ Բարգէն Վ. Կիւլէսէրեան, Եղիշէ, էջ 164—174:

Ուշագրաւ է, որ Մաղթանքս «Փառքքեղ, Տէր — ըստ գործոց իւրեանց» (էջ 161), որ ժամագրքէն (Սեղանի օրհնութիւնէն) առնուած է, կը կրկնուի նաեւ Եղիշէի Պատմութեան Ը. Յեղանակին մէջ (էջ 121), ինչպէս մտադիր եղած է Կիւլէսէրեան (անդ, էջ 164):

Վենետիկի հրատարակութիւնը կ'աւարտի «յորս լիցի մեզ, վերջին գրութեամբ աշխատողացս՝ միաբանութեամբ սուրբ ուխտիւս վայելիք» եւն: Ասկէ կը հետեւցնէր Չ. Ն. Անդրիկեան, թէ Եղիշէ վանահայր եղած ըլլայ եւ խօսած է ճառս «կիրթ ունկնդրաց սուջեւ, որոնք ուսեալք եւ հարցասէրք էին» (Բաղմովէպ, 1905, էջ 490): Բայց Պարիսի հնագոյն օրինակի մէջ կը պակսի այս վերջաւորութիւնը, ուսկից կրնանք հետեւցնել, թէ Վենետիկի թ. 201ի գրչին յաւելուածն ըլլայ:

Գրուածքիս գրութեան ժամանակը ճշգրտու համար գրիչը էջ 163—164 կու տայ հատուած մը, ուր ժամանակի պայմանները կը պատկերացուն: Այս մասին խօսեցանք վերադոյն. եւ հասանք այն եզրակացութեան, թէ Եղիշէ իբր 630ին յօրինած ըլլալու է ճառս:

10. Եղիշայի վարդապետի Վասն հոգւոց մարդկան, թէ ուստի՞ զան եւ յետ էլանելոյ ի մարմնոյ առ ո՞վ երթան, կամ թէ առաւել իմաստնայցեն:

Այս խորագրի տակ պահպանված են մեզի էջմիածնի Թ. 2679 (Գէ. 102) ձեռագրին մէջ (գրուած 981ին) հինգ հատուածներ. որոնք ներքին կապակցութիւն չեն երեւցներ; բայց կ'երեւան մէկ գրուածքէ հանուած հատակոտորներ: Ասկէ 1835ին օրինակած է Հ. Ե. Սեթեան Վենետիկի Մխիթարեանց Թ. 218, Թղ. 287բ—290ա (Սարգիսեան, Յուլիան, Բ., 286). որ հիմ ծառայած է 1859ի հրատարակութեան ծանօթութեամբս. «Զհնգեսին հատակոտորս... յարեմք ի կատարած ծառայս, անյար միմեանց որպէս գտաք յօրինակին գրելոյ ի ՆԼ. ոչ իրրեւ ամբողջ յօրինուած ճառի եւ ոչ դարձեալ անկարօտ պարգարանութեան» (Ծան. յէջն 369): Զեռագրի մասին յիշատակութիւն եղած է նաեւ Երեւակ, Դ. (1859, Կ. Պոլիս) 267:

Յառաջ կը բերեմ այս հինգ հատուածները սկզբնաւորութեամբ եւ վերջաւորութեամբ:

Ա. «Զի գոն եւ հողիք՝ գայս եւ բնութիւն մերոյ լինելութեանս ցուցանէ...»:

ՎՂ. Մինչեւ յօրն յայն, յորում յայտնեցի արարիչն արարածոց:

Բ. «Բնութեամբ կրկին է տեսակ մարդոյ. մին կառավար եւ երասանակալ...»:

ՎՂ. որով յայտ արար զնա միայն գոլ արարիչ բարեացն կամողաց:

Գ. «Աստուած անհատանելի բնութիւն է. ոչինչ հատեալ լինի յԱստուծոյ...»:

ՎՂ. եւ ի մարմնոյ՝ մարմնաւորք, ոյք են հրեշտակք եւ մարդիկ:

Դ. «Զի թէ գմարդկան հոգւոյ կամի ոք ուսանել զկայանս...»:

ՎՂ. եւ նա զայն անուսուցնարար ճարտարութեամբ պատմէ, այն արտաքոյ է քրիստոնէութեան:

Ե. «Մարդ յերկնէ է եւ յերկրէ խառնուած գեղեցիկ...»:

ՎՂ. այլ հնազանդեալ կապանօք մարմնոյ: Հրտ. Մատենագրութիւնք, Բ., 369—376:

ՆՀԲ (Նախագուռն, 11) կը գրէ. «Ճաստաստասիրարար վասն հոգւոյ մարդկան՝ խորին մտօք, եւ գեղեցիկ հայկարանութեամբ»:

Պահուած է միակ ձեռագրի մէջ, իրրեւ քաղուածք: Ետ ցանկալի էր, որ հրապարակ գար իր ամբողջութեան մէջ. որ պիտի ըլլայ Եղիշէի արդէն ձօն գրականութեան

կարեւոր գործերէն մէկը, իր տեսակին մէջ հազուագիւտ:

Հ. Սարգիսեան կը գրէ. «Յոյժ հետաքրքրական գրուածս — հոգւոյ գոյացութեան, ստեղծման եւ մարմնէն բաժնուելէն ետքը՝ անմահ կալոյն եւ գործելոյն» եւն: «Ուսումնասիրութեան արժանի է գրուածս եւ անոր ծագումը» (Յուլիան, 286):

11. Կանոններ:

Դաւիթ գրիչ, որ 1172ին կ'օրինակէր Եղիշէի Պատմութիւնը, Յիշատակարանին մէջ կը գրէր անոր մասին թէ «որ եւ այլ գիրս ստացեալ Կանոնականս զգուշաւորս սրբոյ եկեղեցւոյ» (էջմ. 1890. տե՛ս § 3): Կիրակոս Գանձակեցի այդ աշխատութիւնը կ'անուանէ «Կանոնաց գիրք» (էջ 17): Յովհաննէս Օձնեցի չէ առած այդ Կանոնները իր կազմած «Կանոնագիրք Հայոց» հաւաքման մէջ: Բայց կան Կանոնագրի երկրորդ խումբին մէջ հատուածներ Եղիշէի անունով: Այս տեղ կը համարեմ այն ամէն հատուածները, որոնք Կանոնական նկարագիր ունին եւ աւանդուած են Եղիշէի անունով, ըլլայ Կանոնագրի եւ ըլլայ այլ ձեռագիրներու մէջ:

Ա. Տեառն Եղիշայի վասն յիշատակաց մեռելոց ի Կանոնաց գրոց:

Յայտնի են օրէնք եւ հաստատեալ են ի ձեռն օրինադրին Մովսիսի եւ այլոց մարգարէից. իսկ կանոնականք ի ձեռս առաքելոցն տուան...:

ՎՂ. յոր երթալոց է սատանայ ամենայն գործակցօքն իւրովք: [Յորմէ պահեսցէ Քրիստոս Աստուած մեր զսիրելիս իւր եւ զհամօրէն զինս արեան իւրոյ...]:

== Պարիս, 129, 374ա—379 (Ժէ): Ասկէ օրինակուած է Վենետիկ, 294, 3ա—5ա (1824. Յուլ. 1059):

Հրտ. Մատենագրութիւնք. Բ. 357—362:

1. [Նորին վասն] դժոխոց: Քանգի կրկին է հարուածք դժոխոց. նաեւ երեքիկն...:

Վ. քանգի հեռացաւ գութ եւ թաղաւորեաց ստուգութիւն որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց:

== Վիեննա, 256, 157ա—բ: Հրտ. 360, 39—361, 9:

2. Նորին վասն Ուրացողաց:

Ապա եթէ ոք որպէս հաւատացն կամօք եւ դարձեալ ուրանայցէ, ինքն ի բաց կայ ի կենացն...:

Վ. զի թերեւս ընկալցի ողորմութիւն զթացեալ:

= Վիեննա, 256, 157բ: Հրտ. 360, 1 (վարէն)—361, 9:

3. Նորին վասն Երախայից: Իսկ վասն անմեղ Երախայից, որ հրաժարեցին յաշխարհէս անանց մկրտելոյ, ասեմ...:

Վ. յոր երթալոց է սատանայ: = Վիեննա, 256, 157բ (համառօտուած):

Հրտ. 361, 10—362, 6:

Հ. Յ. Տաշեան, Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական Կանոնաց մատեանը, Վիեննա 1896, էջ 182—183 (= Հանդ. Ամս. 1893, էջ 380), կը գրէ. «Անշուշտ մեր կանոնները տեսած է նաեւ Եղիշէ, եթէ վաւերական է իւր անունը կրող Վասն յիշատակաց մեռելոց... ճառը (տես Եղիշէ, Մատենագր., էջ 357): Այս տեղ կը կարդանք սատողերը. «Յայտնի են օրէնք... իսկ Կանոնակամք ի ձեռս Առաքելոցն տուան...: Պէտք է քննել ձառիս հարազատ ըլլալը կամ ոչ. բայց յամենայն դէպս այս ստողերը գրողն Առաքելոց անուամբ Կանոններ կարդացած էր»: Տաշեան պիտի չյարուցանէր կասկած գրութեանս վաւերականութեան մասին, եթէ գիտնար թէ Կանոնացս հեղինակը է. դարուն կ'ապրէր:

Բ. Սրբոյն Եղիշայի ի Կանոնաց գրոց. գլուխ մի: Վասն դիւախարաց, եթէ պա՞րս է օրէնս տալ կամ թէ երախայից կնիք մինչդեռ դեռ ի նմա է:

Բազում ախտք են ի մարդ. վասն զի ունի մարմին չարչարելի...:

ՎՂ. եւ ոչ ընդդիմանալ պարտի, զի անկաշտ է ատեանն, որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց:

= Վիեննա, 256, 155ա—157ա:

Հրտ. Մատենագրութիւնք, Ա., 295—300: Բ., 363—368:

Թարգմ. A. Maius, Scriptorum veterum nova collectio. X. Romae 1838, 2, էջ 210—212 (Elisei capitulum de energumensis).

Welte, Elisäus von Amathunik, über die Besessenheit: Theologische Quartalschrift, 30 (1848 Tübingen) 633—644 (Թարգմանութիւնն եւ վերլուծումը):

Ա. տպագրութիւնը, որ կատարուած է չորս ձեռագիրներու համեմատ (հնագոյնն 1285էն), կ'աւարտի «վասն որոյ (որ) ետ

առնել եւ որ արար, երկօքեան ընդ դատապարտութեամբ են յամենազէտ ատենին Աստուծոյ»:

Մեսրոպ Վ. (Տէր-Մովսէսեան), Նախապաշարուններ Եղիշէ պատմագրի Կանոններում. ի թերթին Ազգագրական Հանդէս, Բ. (1897), 295—299, հրատարակած է էջմիածնի մէկ ձեռագրէ, որ գրուած է «ԺԳ.» դարուն, Կանոնիս շարունակութիւնը, գիտողութեամբս. «Այն ձեռագրի օրինակը, որից Վենետիկցիք կատարել են իրենց հրատարակութիւնը [այսինքն էջ 363—368 հատուածը] թերի է եղել եւ մեզ հետաքրքրող Կանոն մի քանի ուրիշների հետ չէ ունեցել» (էջ 296): Այդ ձեռագրի մէջ Կանոնս կը կրէ իրրեւ վերնագիր «Մահմանք» եւ այն (տես վարը՝ Գ): Այս նորագիւտ Մահմանքը բաղկացած է 6 գլուխներէ առաջին գլուխն է մեր բաժանման Բ. մասը (տպ. 363—368). իսկ 2—4 եւ 6 գլուխներու բովանդակութիւնը կը համառօտէ, եւ միայն հինգերորդ գլուխը կը հրատարակէ ամբողջութեամբ (էջ 296—299), որուն եւ վերջաւորութիւնն է. «Եւ այլ չար սովորութիւն, որ ուսոյց սատանայ...»

ՎՂ. «Բայց զհասակն եւ ժամանակն տեսցեն զիտնականք եւ այնպէս դատեսցեն, որպէս արժան է»:

Մեսրոպ վարդապետ միտ չէ դրած, որ այս Բ—Զ Կանոնները բառ առ բառ հանուած եւ հոս գետեղուած են Դաւիթ Ալաւկոյ որդւոյն Կանոններէն, որոնք Վիեննայի Թ. 256ի մէջ ՂԸ—Ճ² համարները կը կրեն (Թղ. 219ա—221ա = Ազգագր. Հանդէս, ԺԳ., 1906, էջ 119—120), գետեղուած Եղիշէի «Մահմանք»էն յառաջ: Հմմտ. առ այս նաեւ Ս. Տիգրանեանի Древне-арм. Книга Канонов, I. Պետերբուրգ 1918, էջ 146—147:

Գ. Սահմանք եւ Կանոնք սրբոյն Եղիշէի առ ի խրատ ամենայն որդւոց մարդկան:

Յայտնի է զի գոն զիւհաճարք ոմանք ծածուկք եւ ոմանք յայտնի...:

Վ. վասն որոյ ետ ատենի. եւ որ արար, երկօքեան ընդ դատապարտութեամբ են յամենազէտ ատենին Աստուծոյ:

= Վիեննա, 256, 221ա—223ա:

Հրտ. Բ. 364, 29—368, 10: Ա. 293—294 (Թերի):

Այս Մահմանքը, որ իրրեւ նորութիւններս առնուած է Կանոնագրի մէջ, կրկնութիւն մըն է նախորդ «Իւհաճարաց» Կանո-

256ի՝ թղ. 156ա—157բ եւ ըստ
364, տ. 29—368, տ. 10: Իսկ
զի սպազրէն հետեւեալ կէտե-
րու մէջ. ա. էջ 366, տ. 39 «դաստաշագէտ»
բառէն. վերջը ունի 12 տող նոր հատուած
մը. «Եթէ կամիս ընկալ վկայութիւն ի սուրբ
Գրոց — զի անկաշատ է ատեանն, որ հա-
տուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց»:
Կը շարունակուի՝ «(վասն) Դժոխոց. Քանզի
կրկին է... (տպ. 359, տ. 30—362, 5, դուրս
թողլով էջ 360, տ. 6—39, 361, տ. 12—33,
36—362, տ. 1 (նորոգմանն)):

Դ. 1. Եղիշայի (Կանոն, գլուխ մի):
Եթէ ոք ի կիրակէ կամ (ի) տօնի կամ
յերեւելի աւուրս ամուսնանայ ընդ կնոջ
իւրում, ութ օր ապաշխարեացէ, եւ ապա
հաղորդեացի» (այսքան):

= Վիեննա, 256, 111բ (Յուլ. 652):
2. Եղիշէի վարդապետի Կանոնաց ասա-
ցեալ է:

Թէ արութիւնք ուրուք...:
Վլ. առաքին զհետ հօր իւրեանց սատա-
նայի ի դժոխս: Տես վարը՝ 12, 1:

= Էջմ. 751, թղ. 314բ—321ա (1368):
Հմմտ. Ս. Տիգրանեան, անդ, էջ 159:

Այս Կանոններու հարադատութեան մա-
սին պատճառ չկայ կասկածելու: Բայց թէ
մանր հատակոտորները հարադատութեամբ
հասած են մեզի, կը մնայ խնդրական: Ամէն
ալ ուշ ժամանակի ձեռագիրներու մէջ պա-
հուած են. ի՞նչ աղբիւրէ առած են անոնք,
կրք հնագոյն ձեռագիրք կը լռեն:

Հ. Մ. Աւգերեան (ՆՀԲ. Նախագումն,
էջ 11) ոչ միայն համոզուած է Կանոններու
հարադատութեան, այլ եւ կը հետեւցնէ ա-
նոնց զոյութեանն, թէ Եղիշէ իրբեւ Ամատու-
նեաց եպիսկոպոս կանոնած է զանոնք. «Կան
եւ Կանոնք ինչ նորա ի կարգի Կոնոնագրաց.
որով եւ հաւաստի առաւել՝ եպիսկոպոսու-
թիւն Սրբոյն, կարծեցեալ նոյն ընդ Եղիշէի
Ամատունեաց եպիսկոպոսի՝ յիշատակեալ ի
Պատմութեան իւրում»: Հմմտ. նաեւ Կիւլի-
սէրեան, Եղիշէի, էջ 217. Հ. Ն. Անդրե-
կեան, Բագմավէպ, 1905, էջ 490, Ֆէտատէր,
էջ 112:

12. Հատակոտորներ խրատական բն-
վանդակութեամբ:

1. Եղիշէի վարդապետի ասացեալ վասն
Հաղորդութեան:

Չոր աներեւոյթան ասեն, ոչ ահա մի է
Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի մար-
մին եւ մի արիւն...:

Վլ. Առաքին զհետ հօրն իւրեանց սատա-
նայի ի դժոխս: Տես վերը 11, Դ., 2:
= Էջմիածին, 944, 14ա—բ (1431):
2189, 214բ—215բ (ԺԴ): Հմմտ. Անտո-
նեանց, 11, 22ա (1323): 78, 113ա (1339):
Նիկոսիա, 14, 335բ—337ա:

2. Եղիշէի վարդապետի ասացեալ վասն
Պահոց:

Պահք հրեշտակաց նման առնեն զմարդն,
որ է պահեցող: Պահք բազմաց փրկութիւն...:
= Նոր-Ջուղայ, Ամենափրկիչ, 63,
175ա—177բ (1631):

3. Խրատ Դժոխի Եղիշէի վարդա-
պետի:

Ի ձեռն կիրակրոց մտանեն այս մեղք ի
բնութիւն մարդոյ. եւ որ զայն դուռն փակէ,
բազում մնաս արդելու ի նմանէ...:

Վլ. Եթէ կամիս մարմնովդ որպէս զան-
մարմին օրհնել զԱստուած, մի ստանար ինչ
ի կեանս քո...:

= Էջմիածին, 641, 45բ (ԺԶ): Նոր-Ջու-
ղայ, Ամենափրկիչ, 72, 46բ—47ա: 67, 309ա
(1292): 63, 171բ (1631): Երուսաղէմ,
1089, էջ 334 (1681. Խաչատրեան): Վենե-
տիկ, 275, 39ա (ԺԶ. Յուլ. 921): Էջմիա-
ծին, Դաղեան Խաչիկ Վ. ի ձեռագիրք, 71,
259ա—260 (Թոփձեան, Յուլ. 921):

4. Եղիշէ վարդապետին (վասն միւսան-
գամ զարտեանն Քրիստոսի):

Ահեղ եւ զարմանալի է զարուստն Քրիս-
տոսի եւ ահաւոր՝ զատաստանն. յորժամ եր-
կինք եւ երկիր դղրդեալ շարժինն...:

Վլ. փայլեն որպէս լուսաւորք յարքայու-
թեան երկնից...:

= Վիեննա, 280, 177ա—178բ (1214.
Յուլ. 704): 108, 170բ (1418. Յուլ. 383):

Հրտ. Մատենագրութիւնք, Ա., 285: Բ.,
355:

5. (Եղիշէ վարդապետին ի Կոչումն
Ննջեցելոց ի հանգիստ):

Փողն երկնաւոր ի բարձունս գոչէ առ
ննջեցեալսն...:

Վլ. գոր պատրաստել է սատանայի եւ
հրեշտակաց նորա...:

Հրտ. Մատենագրութիւնք, Ա., 286: Բ.,
355—356:

Ա. սպազրութեան մէջ ծանօթութիւն մը
կը յայտնէ թէ Թ. 4—5 առնուած են «ի չո-
րից օրինակաց. երկուցն եւեթ թուականքն
յայտնի՝ ՈՂ (1221). ՌձԻԳ» (1674. էջ 285):

Հատուածներս պահուած են Մաշտոցնե-
րու մէջ, Թ. 4 յետ Թաղման Բ. աւուր այգա-
լացի Կանոնին մէջ: Վիեննայի օրինակները
չունին Թ. 5: Թէ հրատարակիչը այս երկրոր-
դին համար ի՞նչ ձեռագիր ունեցած է, ինձ կը
մնայ անձանօթ:

Ի մասին Եղիշէի անուան հարադատու-
թեան կը թուի ինձ թէ բաւականաչափ կը
վկայեն բառերս, որոնք հազուադէպ անգամ
զորձածուած են. ասոնք են. «յայնչափ բազ-
մութեան չիք ումեք փախուստ ի հանդիսա-
պետէն» (354). Եղիշէ Ը. Յեղանակ, 120.
«որոյ քաղաքի քաղաքապետ ինքն Քրիստոս
է, հանդիսապետ՝ յորում ասպարիսի նախ
ինքն առաքինացաւ»: «Առաջի ահաւոր բեմ-
րին եւ անկաշատ դատաւորին» (356). բառ
անկաշատ տեսնք վերայոյն 11, Բ. «զի ան-
կաշատ է ատեանն». իսկ Եղիշէ, Ը., Յեղ.
136. «յանկաշատ ատեանն Աստուծոյ», որոնք
կախում ունին Փիլոնէն. «Աստուած, որոյ
ատեանն անկաշատ է եւ անպատրելի» (Լի-
նել. 262). «առ անկաշատ տիկնոջն» (անդ,
201):

13. Հատակոտորներ իմաստասիրական
բովանդակութեամբ:

ա. Եղիշայի:
Չճնողս՝ ծննդոց իւրեանց քերթողքն ա-
րարիչ ասացին. իսկ զվարդապետս՝ աշա-
կերտաց մտաց ուսուցիչ. եւ լաւագոյն գտաք
զմտաց տուիչն քան զմարմնոց ծնողսն. զի
զոտս ախտն բռնագատեաց, իսկ զոտս ա-
նախտ իմաստութիւն մտաւոր:

= Վենետիկ, 297, 188ա (1784. Յուլ.
1090):

Բ. Գառնի շարեաց՝ Կուռքն հեթանոսաց.
Սրբոյն Եղիշայի:

Ափրոզիտէս պոռնկութիւն բազմացոյց:
Ապողոն՝ զարանց սպանումն...:

Վ. յերկվարն քան այր մուծին:
= Էջմիածին, 1898, 248բ:

Հրտ. Ն. Ֆինկ, Zeitschrift für arm. Phi-
lologie 1 (1903) 207—208:

Գ. Մարգ ի յարութեան մարմնոց «զի-
զուս հրեշտակաց առնու, ասէ սուրբն Եղիշէ,
որով ընդ Աստուած եւ ընդ միմեանս խօ-
սին»: Վարդան Պատմիչ, էջ 12:

դ. Սրբոյն Եղիշէի:

1. Հաշտութիւն Աստուծոյ յետ յանցա-
նացն անդուստ յիսկզբանց մարդոյն կարգիւր
գայր առ մի մի ի սրբոցն...:

Վ. ոչինչ եթող արտաքոյ:

2. Որպէս կենդանածնեցաւ երկիրս, կեն-
դանածնեցաւ եւ երկինն. արտական զախ-
տականս եւ անախտն՝ զանախտան...:

Վ. պակաս:
= Էջմիածին, Նոր Ժող. 528, 204ա
(1280):

Հմմտ. Եղիշէ, Բ., Յեղ. 34. «Չեր-
մութեամբ կենդանածնէ զամենայն զոյեա-
ցեալսն»: Ը. Յեղ. 114 «անախտ կերակուր»:

Ե. Եղիշէի Հայոց վարդապետի:
«Արդ թէ մարդ ի հոգւոյ եւ ի մարմնոյ
բաղկացեալ եւ մի բնութիւն...:

= Արտաւագդ արքեպ. Սիւրբէեան, Յու-
ցակ հ. ձ. Եւրոպայի մասնաւոր Հաւաքում-
ներու, Ա., Պարիս 1950, էջ 74 (Թ. 31,
էջ 239. «Համառօտ հաւաքումն վարդապե-
տաց» Վարդան Այգեկցոյ):

Հ. Գ. Զարբանեկեան, Պատմ. հայկ. հին
դար, էջ ԻԷ: Կը յիշէ նաեւ հետեւեալ հա-
տուածները յանուն Եղիշէի, անելով Մով-
սէս Ջուղայեցոյ ժողովածոյքէն.

Գ. Զի թէ մեծութիւն մեղք է...:

Ե. Արդարախօս լինելն...:

Բ. Զիք բարի գոր չիցէ...:

Ք. Որպէս օգուտ են զեղքն:

Ժ. Որ զինքն մահու արենի (°) ...:

Ժա. Անորակ եւ անորպիսութիւն...:

Վերջին հատուածս ունի նաեւ ՆՀԲ. Ա.
218 դ.

«Անորակ, եւ անորպիսութիւն է Աս-
տուած. Եղիշէ. առ Մի(իթար) Ապար(ա-
նեցոյ)»:

ԱՆՀԱՐԱՉԱՏ ԳՐՈՒԹԻՒՆՔ
1. Եղիշէի Հայոց վարդապետի ասացեալ
ի բանն Եսայեայ մարգարէին, որ ասէ. Երանի
տեղոյն այնորիկ, ուր եզն եւ էչն կոխե-
ցեն (այլք՝ կոխեցին):
Արդ եթէ տեղոյն երանութիւն է, առա-
քեալն վկայէ. «Որպէս զի զեղեցիկ են, ասէ,
ոտք աւետարանչացն խաղաղութեան եւ բա-
րութեան» (Հոտմ, Ժ., 15): Եւ Յոհանն Ոս-
կերբեան վարդապետն ասէ. Սրբոցն եւ զար-
չապար(ք) ոտիցն սուրբ են...:

Վլ. ազատեցէ զզերեալսն եւ արձակե-
2

1438-71

ցէք զկապեալն (այլք՝ տուք ակն բանտարգեւեացն), զի արժանաւոր լինիջիք լսել զձայն կենարար եւ զբարբառն երանաւէտ...

= Էջմիածին, 941, 14բ—16բ (1689): 943, 105բ (ԺԸ): 991, 64ա (ԺԸ): 992, 51ա (1651): Վեհապետ, 223, 26ա—27բ (ԺԵ. Յուլ. 355): 227, 88ա—89բ (1846. Յուլ. 428): 234, 65բ (1518. Յուլ. 523): 257, 84բ (ԺԵ. Յուլ. 777): 294, 107ա (1824): Վեհապետ, 4, 19ա—20բ (ԺԵ. Յուլ. 17): 791, 78բ (ԺԵ): 867, 82ա (ԺԵ): Պարիս, 127, 185բ: Երուսաղէմ, 9, 63բ (ԺԴ):

Յայտեայ տեղիքն է. ԼԲ. 20. «Երանի որ սերմանիցեն ընդ ամենայն ջրով, ուր եղն եւ էջ կոխիցեն»: Եղիշէի Մատենադրութեան հրատարակիչը անհարգաւ համարելով ճառս՝ չեն առած Եղիշէի գրուածքներու շարքին մէջ: Այս մասին արդէն ՆՇԻՆ Նախագրուին մէջ, էջ 11 վճռուած էր. «Հատուածք մեկնութեան ի բանն Յայտեայ, օտար յոճոյ Ս. Եղիշէի»: Այսպէս կը գտնէ նաև Հ. Բ. Սարգիսեան, Յուլ. 355. «Ոճն եւ լեզուն իսկ օտար է. յետնագունէ մը յերբերեալ կը տեսնուի. զի մասն մի յիսկերբերանէն եւ մասն մի Յոհան Մանգակունիէն քաղուած է. ուստի որքէն բառքն իսկ, յիշոց եւ յիշոցնատու, միջնագարեան են»: Հմմտ. նաև անդ, էջ 523: Էջմիածին Թ. 991ի խորագրին մէջ հեղինակի անունը նշանակուած է. «Եղիշէի Հայոց կաթողիկոսի ասացեալ»:

Բարգէն Վ. Կիւլիսեան, Եղիշէ, 216 կը գրէ թէ «Ոմանք Եղիշէի անունով Յայտեայ Մեկնութիւն մ'ալ կ'ընծայեն Վարդանանց Պատմագրին եւ Վարդան Պատմիչին միանգամայն (տե՛ս Ալիշան, Վարդան, Գ.)»: Բայց յիշեալ տեղն այսպիսի վերագրում մը չեմ գտներ:

2. Երանելոյն Եղիշէի վարդապետի ասացեալ ի Մկրտուքիւնն եւ ի Ծնունդն Քրիստոսի:

Հրաշափառ եւ պայծառ մեծի լուսաւորութեան աւուրս հանգիւրեցաք. զմարգարէական գերգոս առեալ աղաղակեցուք սուրբ սրտիւ եւ կատարեալ հաւատով. Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ...:

Վ. Մկրտեալն զՄկրտչին առաւելութիւնն քարոզէ ասելով. Չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս, բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա: Նմա փառք յաւիտեանս. ամէն:

= Վեհապետ, 212, 34բ—35ա (ԺԳ. Յուլ. 207): Վեհապետ, 923, 17բ—25բ (1860): Հալէպ, 146, 42ա (1413. Սիւրբէեան, Յուլ. 260):

Հրո. Մատենադրութիւնք, Բ., 207—212:

Հրատարակիչները (էջ 206, ծան.) կը գրեն. «Յաջորդ ճառք գտանին յանուն Եղիշէի վարդապետի. այլ հարազատութեանն եւ իմաստիցն չիք երաշխաւորել»: Ակնարկուած ճառերէն առաջինն է ա՛յս: Եթէ յաջորդներէն մեծագոյնի մասին տարբեր էր մեր համոզումը, սակայն այս ճառին նկատմամբ համակարծիք ենք Հրատարակիչներուն: Լեզուն յամենայն զէպս Եղիշէինը չէ. բառերս բացայայտել (209), եկաւորութիւն (երկիցս), հեռաձգել (209, 210), հետեւողութիւն (209), յարակաշարութիւն (208), յարելութիւն (209), շարադրել (211), շարագրութիւն (208), սեռ (208), տեսաւորութիւն (209) եւ այլն ցանցառ անգամ կը տեսնուին Եղիշէի գրչին տակ: Անթիպատրոս Բոստրացոյ «ի Մկրտութիւն Տեառն» ճառը կը սկսի նոյնպէս «Հրաշափառ»ով: Ուրիշ կողմէ կուս եւ իմաստնալից գրութիւն է:

3. Եղիշէի վարդապետի ի Յարութիւնն: Արդ ահա փութայք ամենեքին ի փափազելի անդր հասանել յարութիւն եւ զիտել զորպիսութիւն նորա...:

Վ. եւ լինին միապեղք եւ միահասակք ամենեքեան...:

= Էջմիածին, 1525, 189ա (1231):

Կը թուի հատակոտորն ըլլալ որ եւ է ճառի մը, որ վերագրուած է Եղիշէի: Պէտք է քննել ի մերձուտ:

3ա. Եղիշէի Հայոց վարդապետի ասացեալ Բան շահաւէտ եւ պիտանի վասն դարձի մեղաւորաց եւ խոստովանութեան եւ սպաշխարութեան եւ վասն ողորմութեան:

Ով եղբարք իմ սիրելիք, մի ոք վհատեցի եւ անյոյս լիցի ի ծանրութենէ մեզաց եւ ի չար գործոց, այլ պարտ է զալ ի խոստովանութիւն...:

Վ. Չայս ամենայն յորժամ առնէք եւ գործով ի կատար հանէք, դարձեալ ասացէք, թէ ծառայք անպիտան եմք...:

= Էջմիածին, 933, 405ա: 941, 12բ: 991, 60բ: 992, 48բ: 1520, 242բ—246բ (1404):

3բ. Երանելոյն Եղիշէի Հայոց վարդապետի ասացեալ Բան շահաւէտ եւ օգտակար հոգոց համայնից:

Ով հաւատացեալ հարք իմ եւ եղբարք, ծառայք Քրիստոսի եւ ծառայակիցք իմ հոյս (Թ. 4 «Իմ հոգոյս Եղիշէի»), մի ոք վհատեցի ի մեղաց եւ մի ոք յուսահատեցի ի կենաց վասն չար գործոց...:

Վ. սիրով զնա սյորէն առ մեզ կոչեցուք, զի նովա թողութեան մեղաց արժանացուք եւ երանաւէտ կենացն հասցուք...:

= Վեհապետ, 4, 17ա (ԺԵ., Յուլ. 17): 147, 104ա—109ա (ԺԵ. Յուլ. 450): 313, 62բ (Յուլ. 745): 764, 36բ (ԺԹ): 791, 74ա (ԺԵ): Վեհապետ, 227, 86բ—88ա (1846. Յուլ. 355): 234, 62բ (1518. Յուլ. 523): 257, 81ա (ԺԵ. Յուլ. 777): Պարիս, 127, 213ա: Երուսաղէմ, 9, 88ա (ԺԴ. Սիւրբ. մէկն, Յուլ.): Չմմառ, Անա. 44, 130բ (1703):

Ճառս կրկին խմբագրութեամբ հասած է մեզի. երկու խմբագրութիւններն ալ ապա ենթարկուած են օրինակողներու կամայականութեան: Վեհապետ Թ. 313 խորագրած է զայն. «Վասն Աւագակին եւ խոստովանութեան»: Խմբագրողը աչքի առաջ ունեցած է Եղիշէի վարդապետութիւնը, յատկապէս 269—272 էջերը, ուսկից քաղուածքներ ըրած է: Հ. Բ. Սարգիսեան, Յուլ. 355. «Ճառն լեզուն թէպէտ կը տարբերի Եղիշէի լեզուն, սակայն որովհետեւ նմանութիւններ կան հոս, — օրինակ իմն՝ աջակողմեան աւագակին վերաբերեալ կտորն՝ ի թաղուին Տեառն ճառին նման է — ուստի հաւանական է որ հարգաւ ըլլայ նաև այս»: Նմանութիւններէն հարազատութիւնը չենք կրնար հետեցնել, գոնէ հոս ոչ:

Հ. Գ. Չարբանաբեան, անդ, էջ 782 յիշած է գրուածքս Եղիշէ քահանայի Այլակերպութեան ճառին կից, տողերովս. «Իրեն կ'ընծայուի գրուած մ'ալ ի ճառընտիրս 'Բան շահաւէտ' եւ այլն»:

4. Աղօթք Սրբոյն Եղիշէի վարդապետին արարեալ վասն Այլակերպութեանն Քրիստոսի:

Օրհնեալ (եւ), Տէր ամենակալ, Որդի եւ Բանդ Աստուած, էակից եւ արարչակից Հօր, գոյացուցիչ եւ համազոյակից Հոգւոյդ սրբոյ...:

= Վեհապետ, 241, 17բ (ԺԴ.—ԺԵ., Տաւ. 627):

Հրո. Ճառոց գիրք, Երուսաղէմ, 1873, Բ., էջ 149—156:

Վեհապետ, Թ. 241ի մէջ կ'ըսուի. «Ասկ զԱղօթս տեսն Բարսղի Կեսարու. այլուր Եղիշէի է ասացած Աղօթքս»: Այս իմաստով ալ կը գրէ Ղազար Ճահեցի, Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս 1725, էջ 624. «Եղիշէ... այլ եւ արար զաղօթս մարդարտաշար ոճով եւ խորին խորհրդով ի դէմս այլակերպութեանն Քրիստոսի, որ յայնմ աւուր ընթեռնանի յիկեղեցիս Հայաստանեայց»: Հմմտ. նաև Կիւլիսեան, Եղիշէ, էջ 165 ծան.:

Վեհապետ Թ. 5 (1223. Յուլ. 19), 245 (1270. Յուլ. 634), 10 (1506. Յուլ. 54), 267 (1661. Յուլ. 684), 269 (1720. Յուլ. 688), 526 (ԺԵ. Յուլ. 997), 698 (1643) միաբան կ'ընծայեն աղօթքս Ս. Բարսղի. այսպէս նաև Ճառոց 1686ի (էջ 860) եւ 1714ի (էջ 848) տպագրութիւնները: Եղիշէի անունն չեմ հանդիպած ո եւ է ձեռագրի մէջ, բայց Վեհապետի վերոյիշեալ Թ. 241է: Ի՞նչ աղբիւրէ առած է իր ծանօթութիւնը Ղազար Ճահեցի:

5. Հարցմունքն ու Պատասխանիք ի Գիրս Ծննդոց, Եղիշէի վարդապետի արարեալ:

Հարցումն. Զի՞նչ իմացուք զասելն Մովսէսի վասն աստեղացն, թէ Աբար գոռոս Աստուած զի եղիցին ի նշանս (Ծն. Ա. 14): Միթէ զոր ինչ խօսին աստեղարաշխքն ուղիղ ինչ է եւ կարե՞ն աստեղք անել զայս: Պատասխանի. Սատանայի պատրանքն Աստուծոյ թոյլ տալովս...:

Վ. թէ յանկարծ օճն խօսուն լինէր: = Վեհապետ, 99, 56ա—74ա (ԺԹ. Յուլ. 370):

Չեռագրին գրչն է Սերովբէ Պետրոսեան, որ ուշադիր ըրած է, որ զաղափարօրինակին մէջ Ա. հատուածին վերջը «Խորովք կամաւքն զոր ինչ էր» տողէն ետքը «յօր. թուղթք պակասէին աստ». իսկ շարունակութիւնն է «||| զիւաց հարսանիքն». իսկ գրուածքիս վերջաւորութիւնն՝ «յանկարծ աւճն խաւսուն լինէր» թերի կ'աւարտի, եւ «աստ վախճանի օրինակ Հարցմանցն Եղիշէի վարդապետի ի Գիրս Ծննդոց»: Ինչպէս յետոյ երեւան եկաւ, զաղափարօրինակի մէջ թէ թղթերու անկում եւ թէ տեղափոխութիւն տեղի ունեցած է: Նախ սկիզբը կազմող

թուղթը կը պատկանի ԼԲ. Հարցման, իսկ սկիզբէն ինկած են Ա.—Ժ. Հարցումները. եւ ժԱ.—ին մէկ մասը: Այս պարագային օրինակողը չէր կրնար գրուածքին խորագիրը գաղափար-օրինակէն առած ըլլալ. ուստի այն ենթադրարար վերագրուած է Եղիշէի:

Երկրորդ ձեռագիր մը, որ գրուածքս Եղիշէի անուամբ ունի, կը յիշէ Յովհաննէս Չամբուրճեան ի Սկիւտար Կ. Պոլսոյ իր 9 ապրիլ 1855 առ Հ. Պօղոս Յովհաննէան ի Վիեննա թղթին մէջ. ձեռքի տակ ունիմ, կը գրէ, քանի մը ձեռագիրներ. անոնցմէ «Երկրորդն է Հարցմունք եւ Պատասխանիք երանելոյն Եղիշէի վարդապետի ի Գիրս Ծննդոց. բոլորգիր ի թուղթ բամբակեայ. եւ երեւի հնագոյն գրչութիւն քան զՊատմութիւնն Աղեքսանդրի: Դժբարխարար ունի ինչ ինչ պակաս. եւ հասանէ մինչեւ յայս Հարցումն. «Զիարդ է այդ այդպէս. քանզի ահա Աղամ դեռ եւս կենդանի էր, եւ Արեւ սպանաւ ի Կայենէ յեղործ իւրմէ»: Եւ ունի զՊատասխանի հարցմանս ամբողջ: Եթէ կամիք՝ կարեմ եւ գայտ օրինակ առաքել առ ձեզ»: Ուստի ձեռագիր մը, որ կը բովանդակէր Ա.—ՀԶ. Հարցմունքն եւ Պատասխանիք (մեր հրատարակութեան): Թէ այժմ ո՞ւր կը գրուուի այս ձեռագիրը, ինձ անծանօթ է:

Հարցմունքէս ձեռագիրներ կը գտնուին մեր, Էջմիածնի եւ Չամբուրճեանի Մատենադարաններու մէջ, բայց առանց հեղինակի անունին եւ գրուածքին խորագրին. կը յիշեմ:

Ա.—Հարցումն. Հրեշտակք յառաջ արարելալք են քան գերկինս եւ զլուսաւորս: Պատասխանի. Ոմանք ի հարցն...:

ՎՂ. Հց. Հի. Արդ եթէ սատանայ եմուտ յօձն, ուրեմն ապա նա երաց գրեթան օձին: Պատասխանի. Եթէ ո՞վ էր որ երաց գրեթան օձին... Թէ յանկարծ օձն խօսուն լինէր:

= Վիեննա, 324, 240բ—266բ (1303. Յուլիան, 771): 99, 56ա: Չամբուրճեան, 162, 110բ—123ա (1642): Էջմիածնի, 631, 195ա—221բ (ԺԴ): Վենետիկ, 265, 315բ—365բ (տե՛ս վարը):

Նոյն խումբի կը պատկանի «Հարցմունք գեղեցիկ եւ պիտանիք յԱրարածոց գրոց խորագրով Էջմիածնի Թ. 466 (Կար. 445), 213ա—221ա (1628) ¹, Ա.—ՀԶ. հարց ու պատասխանի»:

¹ ձեռագիրս ցուցակագրած է Н. Маррѣ, Сборники притчъ Вардана, С. Петербургъ 1899. Проложение, I, էջ 17—18. Եւ Մատ իր Изъ лѣтней поѣздки въ Арменію, Պետերբուրգ 1891 թ. = հայ.

տասխանով, եւ «... ի Կորդուայ ըզլիւ» վերջաւորութեամբ. ուստի որ եւ է պատճառով դուրս ինկած է Հի. հասունածը: Ասոր հետ նոյն կերեւոյ ըստ բովանդակութեան Յ. Չամբուրճեանի ձեռագիրը:

Ի.—ԺԶ. Հարցմունք եւ պատասխանիք գեղեցուած կը գտնեմ «Կանոնը Ս. Գրիգորի Պարթևի. Հարցումն եւ Պատասխանիք նորա» անվաւերական գրուածքին մէջ, էջմիածնի Թ. 657, 125ա—129բ, 659, 110ա (1368) ձեռագիրներու մէջ. հրատարակուած է Աղոնցէ Revue de l'Orient chrétien, 1925/6, էջ 337—357 եւ Հայրենիք Ամսագիր 1928 (Բոստոն), էջ 72—81:

Հարցմունք եւ Պատասխանիք Ա.—Հի. հատուածներով հրատարակեցի Եղիշէ վարդապետի անուան տակ, Վիեննայի Թ. 99 եւ 324 ձեռագիրներու հիման վրայ, կրկին ստորագրութեամբ.

Հրա. Եղիշէ վարդապետի Հարցմունք եւ Պատասխանիք ի Գիրս Ծննդոց, Վիեննա 1924, էջ 43—78: Բ. տպ. Elisée Vardapet, Questions et réponses sur la Genèse. Publié par P. N. Akinian, traduit par Dr. P. S. Kogian. Vienne 1928.

Ձեռագիրներու մասին այս կարճառօտ տեղեկատուութենէս կը տեսնուի, թէ Հարցմունք եւ Պատասխանիք աւանդուած են մեզի առ հասարակ առանց խորագրի եւ անանուն: Միայն Վիեննայի Թ. 99 եւ Չամբուրճեանի օրինակը կը վերագրեն գրուածքս Եղիշէի: Առաջինը, որ սկզբէն պակասաւոր է, չի կրնար վստահութիւն ներշնչել մեզի, թէ Եղիշէի վերագրումը ձեռագրական հիմ ունեցած է. երկրորդին որակաւորութիւնը անծանօթ է մեզի: Անանուն գրուածքին այս վերագրումը Եղիշէի՝ հաւանօրէն բանասիրական ենթադրութիւն մըն է, յառաջագոյցած այն հանգամանքէն, որ Եղիշէ հեղինակ եղած է Ծննդոց Գրքի մեկնութեան մը, որ չէ պահուած մեզի:

Հ. Յ. Գաթրճեան ի տես Թ. 99 ձեռագրին գրած է տողերս. «Ձեռքերնիս, շատ տարիներ չէ, եկած է հին երկասիրութիւն մը, աւա՞ղ թերակատար, բայց ըզուցէն առիւժ մը տեսնուած, Ծննդոց գրոց զժուա-

թարգմ. Ո. Անտիեան, Ամսանային, ուղեւորութիւնից գէպ ի Հայս, Վիեննա 1892, էջ 13—15, յառաջ կը բերէ այս ձեռագրէն Թ. եւ Ժ. հասունածները. ուր գրուածքին հեղինակ կը ներկայացնէ Վարդապետի ձեռագրէն մէջ որ եւ է խօսք չկայ հեղինակի մասին:

րութեանց պատասխանիք: Եղիշէի անուն կը կրէ: Բայց ստուգիւ մեր քանչեցածին նման չի կրնար ըլլալ: Հոն խնդիրներէն մէկն է՝ «Զինչ արդեւք իցէ ասելն Եղ զնա ի գրաստին գործել զնա եւ պահել: Զգործէն եւ զպահէն ոմանք զարդարութեմ եւ զպատուիրանէ ասացին...: Ո՞վ չի փորձուիր ըսելու որ աս (դժուարաւ Զ. դարուն սկզբէն անդին սպրոզ) անունը՝ հարկաւ այն իսկ մեր պատարագին ² խօսքերը կ'ակնարկէ ³»:

Երբ երեւան հանեցի գրուածքին լիակատար օրինակը Վիեննայի Թ. 324ի մէջ, ուղեցի հրատարակութեան տալ այս հետաքրքրական բնագիրը: Երկու ձեռագիրներու հիման վրայ վերակազմեցի բնագիրը: Պահեցի Թ. 99ի խորագիրը, որ գայն «Եղիշէ վարդապետի» կ'ընծայէր: Տակաւին չէի պատրաստած Յառաջարանականը, երբ հասաւ ինձ Մեծաւորացս հրամանը պատրաստուել մեկնելու Խորհրդային Հայաստան (1924 յունուար):

Բնագիրը շարուած էր արդէն: Ժամանակը չէր ներած գրուածքին մէջ գործածուած աղբիւրներու մանրակրկիտ հետազոտութիւնն եւ այլ հարցերու քննութիւնը: Որպէս զի բնագիրը լոյս տեսնէր, գրած էի համառօտ յառաջարան մը. ուր ի մասին հեղինակին արտայայտուած էի. «Գրուածքս Եղիշէ վարդապետի կը վերագրեմ յեցած Թ. 99 ձեռագրին միակ վկայութեան վրայ: Նկատելով որ գրուածքին բովանդակութիւնը, լեզուն, ոճը կը կրեն հնութեան կնիք, որոնք լիովին կը համապատասխանեն նաեւ Եղիշէ վարդապետի ժամանակին եւ գրութեանց նկարագրին, հաւատարիմ կը համարեմ Թ. 99 ձեռագրին վկայութիւնը» (էջ 44): Այս կէտի մէջ սխալած էի:

Աղբիւրներու քննութիւնը, որ ինձ չէր յաջողած, յանձ առած է Հ. Ա. Վարդանան ⁴. որ ցոյց կու տայ, որ գրուածքին հեղինակը ձեռքի տակ ունեցած է Արիստոտէլի «Յաղագս աշխարհի» գրութիւնը, թարգմանուած հաւանօրէն Ի. զարուն: Այս աղբիւրը այժմ զժուարութիւն չի յարուցաներ. վասն զի Եղիշէ կարող էր գայն կարգացած

² Կ'ակնարկուի Ս. Սահակի ընծայուած Գր. Նաղանգացոյ Պատարագը:

³ Գաթրճեան-Տաշեան, Արարան Պատարագամայցք Հայոց, Վիեննա 1897, էջ 225. Ծան. 15:

⁴ Հ. Ա. Վարդանան, Եղիշէի վարդապետի Հարցմունք եւ Պատասխանիք ի Գիրս Ծննդոց, Հանդէս Ամսօրեայ, 43 (1929), 1—10, 65—79:

ըլլալ: Աւելի կարեւորութիւն կը ստանայ վարդանանի այն անդրադարձութիւնը, թէ գրուածքին հեղինակը ծանօթ եղած է Դիոնիսիոս Արիստոտէլի Յաղագս երկնային քահանայապետութեանց, որ թարգմանուած է 712ին: Տեղիքն «Սերովբէքն, որ թարգմանին կիզիչք կամ ջեռուցիչք», «Քերովբէքն, որ կոչին յաճախ գիտութիւն կամ հեղումն իմաստութեան», Դիոնիսիոս ունի. «Եւ զարրոցն Սերովբէից անուանախոչութիւն ասեն որք զԵրրայեցոցն գիտեն, թէ կիզիչս երեւեալ կամ ջեռուցիչս. իսկ զՔերովբէիցն՝ կամ բազմութիւն գիտութեան կամ հեղումն իմաստութեան» (Վիեննա, Թ. 848, թղ. 11բ): Բայց ես արդէն իսկ ուշադիր ըրած էի (էջ 45, Ծան. 3), որ հեղինակը հոս «Բառք Երրայեցոց» կոչուած բառագիրքը նկատի ունեցած է. վասն զի Դիոնիսիոսի «բազմութիւն գիտութեան» հոս ունինք «յաճախ գիտութիւն»։ Տիշղ այսպէս նաեւ Բառք Երրայեցոց: Նոյն տեղ կը գտնենք նաեւ «կիզիչ (առանց «երեւեալի») կամ ջեռուցիչ», ինչպէս նաեւ «յաճախ գիտութիւն կամ հեղումն իմաստութեան» համաձայն յոյն սկզբնագրին: Իսկ այս Բառագրքին թարգմանութիւնը հին է, ծանօթ Եղիշէի իր այլ եւ այլ գրուածքներու մէջ:

Թէեւ այս կէտի մէջ ալ կ'արդարանանք գրուածքս Եղիշէի վերագրելու. բայց եւ այնպէս մասնանիշ կ'ընէ վարդանանի աւելի կարեւոր փաստ մը, որ կը լուծէ ամէն տարակոյս այս հարցին շուրջ:

Հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք Հայոց, էջ 10, 12, 195, 203, 210 կոչումներ յառաջ բերած է գրուածքին վեներաբիլ Միթրեանց մէկ ձեռագրէ, ուր Հարցասէրը Հեթում (Բ.) թագաւոր կը ներկայանայ եւ պատասխանողն Վահրամ վարդապետ ԺԳ. դնարուն: Բայց Վարդանան ուշադիր չէ եղած, որ Հ. Ալիշանի աղբիւրն, ուսկից յառաջ կը բերուէին վերոյիշեալ տեղիքները, Վեներաբիլ Թ. 265 ձեռագիրն է, որուն ցուցակագրութիւնը տուած է Հ. Բ. Սարգիսեան այսպէս. «Հարցումն թագաւորին (Հայոց) Հեթում (ա՛յսպէս), թէ Հրեշտակք յառաջ արարելալ են քան գերկինս եւ զլուսաւորս: Պատասխանի Վահրամայ: Ոմանք ի հարցն նախ ասացին...»: ՎՂ. «Ըստ նմին օրինակի... յանկարծ օձն խօսուն լինէր» (Թ. 235, թղ. 315բ—365բ. յամէ 1317. Յուլիան, Բ.,

853): Յուզակազիրը հաշուած է «71 Հարց-մունք եւ պատասխանիք են, մերթ ընդար-ձակ եւ մերթ հակիրճ»:

Վահրամ Բարունի Կիլիկիցի ծաղկած է ԺԳ. դարու վերջին քառորդին. վախճանած է 1293էն ետքը:

Գրութեանս ընթացքին առիթ եղաւ յի-շելու, թէ եղած են ոմանք, որոնք ձախորդ կարծիքն ունեցած են, թէ Եղիշէ թարգմա-նիչն եղած ըլլայ Մակարայեցոց գրքերու եւ Ս. Գրոց այլեւայլ մասերու¹. Վասն զի գամ են լեզուի նմանութիւններ ասոնց եւ Եղիշէի մէջ: Գծրախտարար անոնք աչք եւ ականջ գոցած են այն աղաղակող աննմանու-թիւններու, որոնք սարերով եւ ձորերով կը հեռացնեն Եղիշէն այդ գրութեանը լե-զուէն եւ ոճէն: Եղիշէ կարգացած է Ս. Գիրքը եւ օգտուած է անոնցմէ ամէն կերպ. բայց իր կրած ազդեցութիւնը այդ գրութեաներէն թոյլ չի կրնար տալ հետեւեցնելու, թէ ինքը եղած ըլլայ անոնց թարգմանիչը: Չարժէր այս հարցի քով աւելի երկար կանգ առնել:

Եղիշէ իր հարուստ մատենագրական վաստակներով կարեւոր տեղ կը գրաւէ է. դարու գրականութեան մէջ: Եւ եթէ իր մահը 650էն ոչ շատ վերջը տեղի ունեցած է, ժամանակն է ասելու անոր մահուան 1300ամեակը եւ այս առիթով հրատարակ հա-նելու անոր երկասիրութիւններու լրակատար եւ քննական հրատարակութիւնը:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԵՓՐԵՏԻ ՍԵՉՄԵՆԵՆԳԼՈՒԹԵՐ ՊՈՄՊԵՆՍԻ ԹԵՄԵՆԵԳԻՆ ՄԻՆՉԵՆ ԵՐԵՐԵՅԻՈՑ ԸԹՅԵՐՀԵՎԵԼՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն):

§ 3. Սատարք՝ Թեւեւ եւ վաշտք:

Լեզուներ յարմար էր ամէն արշաւանքի-բայց պատերազմի ոսոխին համեմատ՝ պա-հետի Սատարներէն (auxilia) կ'առնուէին այս կամ այն տեսակ մարտիկներ, զոր լե-զէնը չունէր: Իրօք ալ այս Սատարող գնդերը յաճախ՝ հոսմէացի պետի մը ներ-քեւ՝ կը պահէին իրենց աւանդական դէն-քերը եւ յատուկ մարտագիտութիւն մը: Այս մասին լոյս մը կը սփռեն այլեւայլ պատկե-րաքանդակ յիշատակարաններ, որոնք սա-կայն ցանցաւ են, իսկ Արեւելքի նկատմամբ՝ ասոնցմէ հատ մը միայն կրնամ յիշատակել:

Աթէնքի թանգարանին մէկ կոթողը¹⁶¹, որ Սպարտա գտնուած է, կը ներկայացնէ կանգուն կեցած մարդ մը՝ որ անտարակոյս սատարական վաշտի մը կը վերաբերէր¹⁶²: Հագած է շերտաւոր գրահ, որ կիսով ծած-կուած է վերարկուի մը ներքեւ, պարեգօտ մը, կիսակոշիկներ եւ իրբեւ գլխու ծած-կոյթ՝ թաղի մը: Չինուած է ձուածեւ վա-հանով մը, ուղղորդ սուսերով մ'երկայն երա-խակալով որ երկու ձեռքով կրնայ բռնուիլ, եւ կարճ լախտով մը՝ որ յիշատակարանիս ամէնէն նշանաւոր մանրամասնութիւնն է¹⁶³:

¹⁶¹ P. Wolters, Ein Denkmal der Partherkriege (Athen. Mitth. XXVIII, 1903, p. 291—300. (Տմտ. Lebas-Foucart, II, 203 b).

¹⁶² Արձանագրութիւն նոյնը չի բեր. Μάρκος Αὐδούλιος Ἀλέξυς Θεώνος στρατιευσάμενος κατὰ Περ-σῶν ἐτη βιόσασε λ'. (Մարկոս Արեղիոս Ալեքսիս Թէո-նոս զինուորեալ ընդդէմ Պարսից կեցեալ ամս Լ.) բայց լեզուական ըլլալը յիշուած կ'ըլլար՝ եթէ այն հանգամանքն ունենար: Իր եռանունութիւնը (tria nomina) արդէլք մը չէր՝ լեզուէն մը գուրս ծա-սոցած ըլլալու. բայց աստի քաղաքացոյց իրաւունքը շատ տարածուած էր Գ. դարու սկիզբը, որ ժամա-նակէն է յիշատակարանք, եւ կ'երեւայ թէ աստի նման գրական Վարակալա Արսիոյ մէջ զինուորակոչ ըրու-պարթեւական պատերազմին համար. «Սպարտայէն բե-րի տարով կոշից երիտասարդ Լակոնական եւ Պրատա-նտեան խումբը (γεαρίαις Λακωνικόν και Πιταναίην λό-χον ἐξάλει) կը գրէ Հերոդեան (Գ, 8, 3):

¹⁶³ Wolters իրաւամբ մասնաճիւղ կ'ընէ լախտի գործածութիւնը Արկադիացոց քով (Ստատ., Թերայ, Գ, 301) որոնցմէ նոյնը փոխ ասած ըլլալու էր լակե-դեմոնական դունդր (λόχος). Համեմատեմք ուրիշ օրինակ մ'ալ. Արեղիանու բանակին մէջ Պարթեանի գնդերը գինուած էին՝ բայց ի ուրիշ գէնքերէ, ինչպէս Չոսիթոս կ'ըսէ, նաեւ մահակով ու բրով (χοστίνιας και ὀπάλα) ասոնց հարուածներուն ներքեւ Պալ-միրացիք կ'ընդարձակուին ու կ'անդամալուծուէին (Ա. 53, 2—3): Տմտ. Պարսից լախտերը՝ վերը ԳԼ Բ.:

¹ Արարատ, 1896, էջ 555 եւ 1897, էջ 212:

Գծրախտարար ասի քիչ մը բացառիկ տիպար մըն է մարտիկի մը. աննշան եղած ըլլալու էին բուն Յունաստանէ զօրահան եղած զի-նուորները¹⁶⁴:

Սատարաց գլխուն մէջ ժամանակագրա-կան որեւէ բաժանում անհրաժեշտ հարկա-ւոր չ'երեւար: Մարտական այս միութիւն-ներն՝ որեւէ ուրիշ միութեանէ մ'աւելի՝ գերծ-մնացած կ'երեւան այլափոխութենէ՝ իրենց սկզբէն սկսեալ մինչեւ վերջը, որ ամէնէն կանուխ Ե. դարուն է. որովհետեւ «Տեղեկ-Աստիճ.» դրոց մէջ թեւեւ ու վաշտեր կը վիտան միեւնոյն անուանակոչութիւններով՝ զոր երբեմն ունեցած էին¹⁶⁵:

Շատ բազմալի էր որ՝ գոնէ այն անրա-ւական չափով որով կրցանք նոյնն ընել լե-զաններու համար, կարելի ըլլար հոս ալ նշանակել այս գորագնդերէն անոնք, որ՝ այլեւայլ շրջաններու մէջ՝ կը վերաբերէին կայուն բանակագործի, եւ միւսները՝ որ միայն բացառարար կը կոչուէին պատերազ-մական ծառայութեան¹⁶⁶: Բայց ասիկայ ան-կարելի ձեռնարկ մըն է: Այս խնդրոյ ու-սումնասիրութեան համար բոլորովին անօ-գուտ են մատենագրական աղբիւրները, գրեթէ մէկ բացառութեամբ¹⁶⁷: Հեղինակ-

¹⁶⁴ Եւ կ'երեւայ թէ ամէնքն ալ միեւնոյն ժամա-նակին կը վերաբերին. Տմտ. CIG, 1253 (Սպարտա)՝ Νεοκλιη: νέος, δημόσιος, ἐοικ(ο)ται(ν)υμένιος δις γαῖα Περσ(ω)ν. (Նիկիոսի կ'երեւայ զինուորական, կը-կիցս զինուորեալ ընդդէմ Պարսից): Չեմ կարծեմ, թէ Լ. Վերոսի պատերազմն ըլլայ բնագրիս մէջ սկի-նարկուածը, այլ մասնաւոր կարակալայինը եւ յետոյ Աղեքսանդր Սեւերոսի, յաւել՝ 1495. Lebas-Fou-cart, II, 183 b. Մեկտարիցի մէկ արձանագրութիւնը, որ ծանօթ է միայն Whelerի յոսի մէկ օրինակու-թեան, ապահով ունի հետեւեալ՝ τὸ ἐπιχορηγία τῶν ἐν τῷ Περσικῷ πολέμῳ ἀποθανόντων ... (Վերտա-սութիւն Պարսկական Պատերազմի մէջ մեռնողնե-րուն...) CIG, 1051:

¹⁶⁵ Սակայն անտարակոյս կը զարբին ընդհանուր Սատարք անուն տակ պարտերուէն, որովհետեւ այս բացառութիւնս այնուհետեւ կը նշանակէ նոր կազ-մութիւններն՝ որ միայն հետեւեցնելը կը մտնէին, ոմանք կայանաւորուած Գանուրի կողմը (Տեղեկ. Աստ., Արեւմ. XXXII, 39—43. XXXIII, 46—50). ուրիշ-ները՝ պաղատական պահեստի մէջ (auxilia palatina) տես վարք:

¹⁶⁶ Ապահով տեղեկութիւն մը Յովսեփոսի քով (Պ. Հ., Բ., 500), բայց միահամուտ կերպով եւ միայն կրկնակց կ'որոշողութեան մը վերաբերմամբ. «Տիտոս ասա, կ'ըսէ, իրեն հետ վեց վաշտեր եւ չորս թեւեր, եւ գարձեալ դաշնակցաց օգնականները» (Տայ ընդդէմը՝ էջ 194 սյուսիս է՝ «եւ այլոցն ԲՈՒ ընտիր հետեւալ, եւ չորս թեւս հեծելաց, եւս եւ զօգնակա-նութիւնս թալարոց»):

¹⁶⁷ Ակնարկել կ'ուզեմ Առիանու «Ճակատամար-տութեան ընդդէմ Արմանց» երկը, զոր մանրամասն լուսարանէկ E. Ritterling, Zur Erklärung von Arrians Ἐκταείας κατ' Ἀλων (ի Wiener Studien, XXIV, 1902, p. 359—372):

ները գրեթէ չեն յիշեր թեւեւն ու վաշ-տերը¹⁶⁸, նախ՝ կարծեմ անոնց թուական տկարութեան պատճառաւ, եւ երկրորդ՝ հաւանորէն որովհետեւ շատ մեծարգի չէին նկատուիր: Նոյն իսկ գաւառական հեղինակ-ները կը ջանան Հոմոսայեցոց արտայայտու-թեանց նմանիլ. իսկ արդ այս մանրամասն գորարածիւնները գրեթէ ամբողջովին չէին պարունակեր հոսմէացի քաղաքացիներ:

Սակայն երբեմն երբեմն պատմագիրները կը յիշատակին մարտի մը մէջ Փոլեագացոց, Դակիացոց, Գաղղիացոց եւս կատարած քաջագործութիւնները: Արդ երբ այս ազգաց անունները կը գտնենք իրր յորջորջանք թեւե ըր կամ վաշտի մը, պէ՞տք է հետեւեցնել թէ այս թեւը կամ վաշտը ներկայ էր ճա-կատամարտին¹⁶⁹: Այսպիսի կորակացութիւն մը անխոհեմական ըլլալ կը կարծենք: Այս Սատարաց որեւէ մէկ բաժինը կ'անուանա-կոչուէր ազգագրական այն խաւին համեմատ՝ որուն կը վերաբերէին այն գնդին կազմուե-լու ատեն անոր մէջ մտած գինուորները: Սակայն իւր սկզբնական տեղը չի մնար. յա-ճախ տեղէ տեղ կը ճամբորդէ¹⁶⁹. Իւր կար-գերուն մէջ բացուած պարապները կը լե-ցուէին այն նորակոչներով՝ որոնք կ'առ-նուէին նոր կայաններու տեղերէն, ուստի ուրիշ ցեղերէ¹⁷⁰. Եւ անունն իսկ միայն յա-րարերական արժէք մը կը պահէ, որ կրնայ բոլորովին խորհրդաւոր իսկ դարձած ըլ-լալ¹⁷¹: Հետեւաբար խնդրոյ նիւթ եղող ընդգրկներուն մեկնութիւնը շատ վտանգա-լից է: Ասկէ շատ լաւ կը հասկըցուի թէ

¹⁶⁸ Պրոտարքոս շատ անգամ կը յիշատակէ Ղու-կուզոսի վաշտերը (Պրոտարք., Ղուկ. 27, 31). կ'ակնարկէ այն հետեւակազորն՝ որ «թէ՛ թեթեւակն էր եւ թէ՛ ծանր սպառակն»՝ զոր նոյն պետն իւր Սեքստիլիոս նուիրակին տուաւ: Թեթեւակնը շատ ըզգմաթիւ եղած չ'երեւար. իսկ յիշուած վաշտերուն մասին՝ յայտնի չէ թէ Սատարաց գնդեր են եթէ լե-զանի բաժիններ:

¹⁶⁹ Մարքարտ (Marquardt, Oganis milit., զգ. Թրգմ. էջ 197, ծն. 7) չափաանցուցած է Սա-տարաց այս շրջուն նկարագիրը. ասոր հակառակ մեր յիշատակարանները՝ որ այսօր շատ աւելի բազմաթիւ են, չափաւոր հաստատականութիւն մը կը ցուցնեն: Օրինակի համար՝ 139 եւ 157 տարիներու վերջապարբ հաստատելով այն կարծիքը թէ Լուլիանոսի գրաւա-բութիւններ (CIL, III, 600) Տրայանոս Պարթեական պատերազմին մէջ ծառայած են, կը ցուցնեն միան-գամայն թէ այս գնդերուն բաւական մաս մը հոս մնաց այնուհետեւ, ոմանք մինչեւ իսկ «Տեղեկ. Աստիճ.» դրոց ժամանակը: Բայց ի վերջոյ ընդհանուր կանոն մը չկար:

¹⁷⁰ Մարկարտ (անդ, ծն. 8) ինքնին կը յիշէ ասոր հակառակոյ բազմաթիւ դէպքեր:
¹⁷¹ Տմտ. Մոմսէն, ի «Hermes», XIX, 1884, էջ 210 եւն: